# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 35 (1685) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 27, 2014
VOLUME 34, NO. 35 (1685) SATURDAY, SEPTEMBER 27, 2014

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Հայաստանի Անկախութեան 23-րդ Տարեդարձի Նուիրուած Փառատօնը Պսակուեցաւ Մեծ Յաջողութեամբ



Փառատօնի ընթացքին ելոյթ կ'ունենայ Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը

«Հայաստանը Ամէն Բանէ Վեր» խորագրին տակ, Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպութեամբ, մեծ շուքով ու խանդավառութեամբ նշուեցաւ Հայաստանի անկախութեան 23-րդ տարեդարձը:

Կիրակի, 21 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 11-էն սկսեալ ընթացք առած տօնակատարութեան ներկայ ըլլալու համար հազարաւոր Լոսանճլոսահայեր փութացած էին Կլէնտէյլի «Վերտուկօ Փարք»-ը, միասնաբար վայելելու հայ մշակոյթը ներկայացնող՝ հայկական աշխարհը իր երաժշտութեամբ, արուեստով, ազգագրական պարերով, հայկական ձեռագործներով, գորգերով եւ ճաշատեսակներով, որոնք պատրաստուած էին շնորհալի տիկիններու ձեռամբ եւ զետեղուած տաղաւարներու ու կրպակներու մէջ եւ կը մատուցուէին հայ ժողովուրդի իւրայատուկ ջերմութեամբ եւ հիւրընկալութեամբ:

Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու զոյգ քայլերգները հնչելէ ետք, Օր. Անի Մարսէլեան իր բացման խօսքով բարի գալուստ մաղթեց ներկաներուն շնորհաւորելով Հայաստանն ու հայ ժողովուրդը: Ան շնորհակալութիւն յայտնեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան, որ շարունակական բնոյթով, տարիներու ընթացքին կը կազմակերպէ Հայաստանի Անկախութիւնը նշող ու հայ ժողովուրդի մշակոյթը ներկայացնող այս միջոցառումը: Հակիրճ բացատրական մը տալէ ետք ան հրաւիրեց ներկաները այցելելու տաղաւարները, համտեսելու մեր ազգային խոհանոցի նրբահամ ճաշակը ու ծանօթանալու մեր պատմական արժէքաւոր հայաստանեան

Շար.ը էջ 8

## Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Հայաստան-Սփիւռք 5-րդ Համաժողովը




Հայաստան-Սփիւռք Համաժողովի բացման նիստի բեմը

Սեպտեմբեր 19-ին Երեւանի Օփերայի սրահին մէջ պաշտօնապէս բացումը կատարուեցաւ Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովի:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Հայաստանի քաղաքական եւ կրօնական ղեկավարութիւնը, ինչպէս նաեւ Սփիւռքի կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Ընդհանուր առմամբ, համաժողովին իրենց մասնակցութիւնը կը բերէին սփիւռքեան 300 կազմակերպութիւններու շուրջ 1050 ներկայացուցիչներ, որոնք Հայաստան ժամանած էին աւելի քան 60 երկիրներէ:

Բացման հանդիսութեան ընթացքին առաջին խօսքը արտասանեց Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան: Ան ըսաւ, որ Հայաստան իւրաքանչիւր հայու համար պէտք է դառնայ արժանավայել կեանքով ապրելու հնարաւորութիւններու երկիր: «Հայաստանի կառավարութիւնը յստակ քայլերու կը ձեռնարկէ մեր երկրին մէջ ընկերատնտեսական վերելքի ապահովման ուղղութեամբ», շեշտեց վարչապետը: Ան երախտագիտութիւն յայտնեց բոլոր հայերուն, որոնք իրենց նուիրումով գգալիօրէն նպաստած են Հայաստանի եւ Արցախի տնտեսական վերելքին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեան իր խօսքին մէջ նշեց, որ համաժողովը դարձած է աւանդական եւ իր առանձնայատուկ տեղը կը գրաւէ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններուն մէջ: Ան եռամիասնութիւնը համարեց հայոց անկախ պետականութեան հիմնասիւներէն եւ հայ ժողովուրդի ազգային ինքնութեան պահպանման, Հայրենիքի հետ կապերու ամրապնդման առանցքային բաղադրամասերէն մէկը: Սահակեան անդրադարձաւ Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններուն:

Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս իր խօսքին մէջ նշեց, որ Հայաստանի մէջ տակաւին կան անկատարութիւններ, անարդարութեան դրսեւորումներ եւ յանցանքներ, որոնք պէտք չէ շուքի տակ ձգեն մեր հայրենասիրութիւնը: Կաթողիկոսը շեշտեց միասնականութեան կարեւորութիւնը եւ պահանջեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ու հետապնդման հարցով ամբողջական ջանքերու ներդրումը: Վեհափառ հայրապետը նաեւ անդրադարձաւ Միջին Արեւելքի խնդիրներուն եւ կոչ ուղղեց օգնութիւններ փոխանցելու Սուրիոյ եւ Իրաքի հայերուն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս յայտարարեց, որ կաթողիկոսութիւնը մօտ թուականին Թուրքիոյ դէմ դատ պիտի բանայ՝ պահանջելով Սիսի կաթողիկոսութիւնը: «Չենք կրնար անտարբեր մնալ մեր ազգին բռնաբարուած իրաւունքներուն նկատմամբ: Հետեւաբար, կոչուած ենք հարիւրամեակը բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ նշելու եւ զայն արժեւորելու այնպիսի իրագործումներով, որոնք մնայուն հետք կը թողուն ու նոր հունաւորում կու տան Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն: Ժամանակը հասած է, որ Հայ Դատի աշխատանքները ճանաչումէն անդին փոխադրենք իրաւական դաշտ», ըսաւ Արամ Ա. կաթողիկոս:

Հանդիսութեան ընթացքին խօսքեր արտասանեցին նաեւ հայ կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիներու ներկայացուցիչները, հայ ազգային երեք կուսակցութիւններու եւ ՀԲԸՄ-ի ղեկավարները, ինչպէս նաեւ հայկական այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Խօսք առաւ նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան: Ան ողջունեց համաժողովի կայացումը եւ մասնակիցներուն ներկայութիւնը:

«Իսկապէս, համաշխարհային ծանր տագնապներու մթնոլորտի

Շար.ը էջ 4

## Հայաստան Դատապարտեց Տէր Զօրի Նահատակաց Եկեղեցւոյ Պայթեցումը

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ կապուած Տէր Զօրի Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցւոյ պայթեցման հետ, որ կատարուած է Կիրակի օր, շրջանին մէջ գործող ծայրայեղական ահաբեկիչներ կողմէ:

«Խստօրէն դատապարտում ենք Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած, Մեծ Եղեռնի բազմաթիւ Նահատակների մասունքներն ամփոփող Տէր Զօրի Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցու պայթեցումը ահաբեկիչների կողմից: Սրբավայրի հանդէպ այս զարհուրելի բարբարոսութիւնը կրկին անգամ ցոյց է տալիս, այսպէս կոչուած, «Իսլամական պետութիւն» ահաբեկչական խմբաւորման վայրագ էութիւնը»,- մասնաւորապէս ըսուած է յայտարարութեան մէջ:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը նաեւ միջազգային հանրութեան կոչ ըրած է անյապաղ կանգնեցնել եւ արմատախիլ ը նել քաղաքակիրթ մարդկութեան սպառնացող այդ ժանտախտը:

Հայոց Ցեղասպանութեան զոհերու մասունքներու սրբապղծումը դատապարտեցին նաեւ Միացեալ Նահանգներու Պետական Գրասենեակը եւ շարք մը ամերիկացի գոնկրէսականներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Օլիգարխիան կայացրել է դատավճիռը

*ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ*

*ՀՀԿ խօսնակ Էդուարդ Շարմազանովն ասել է, որ ռեւանշիզմի եւ օլիգարխիայի սերտաճումն ամենամեծ վտանգն է պետութեան համար: Նա այդ մասին յայտարարել է Ռոբերտ Քոչարեանի ակտիւ քաղաքականութիւն վերադառնալու հարցի կապակցութեամբ:*

*Քոչարեանն, իր հերթին, իր վերջին հարցազրոյցում խօսել էր մենաշնորհները վերացնելու անհրաժեշտութեան մասին: Իսկ մենաշնորհները, ինչպէս յայտնի է, պատկանում են օլիգարխներին:*

*Հետաքրքիր պատկեր է ստացւում, առաջին հայեացքից: Փաստացի, նախկին եւ ներկայ նախագահները խօսում են նրանից, որ օլիգարխիան Հայաստանին սպառնացող վտանգ է: Իհարկէ, հետաքրքիրն այս միտքը չէ, քանի որ դրանում բոլորն են համոզուել: Հետաքրքիրն ինքնին այս հանգամանքն է:*

*Հայաստանի տնտեսա-քաղաքական օլիգարխիկ համակարգը ձեւաւորուեց Քոչարեանի նախագահութեան սկզբում: Մինչ այդ, երկրում տէրուտնօրինութիւն էր անում ռազմա-ֆեոդալական օլիգարխիան: Լեւոն Տէր-Պետրոսեանը այդ «յայտնի ուժերին» պատճառ բերելով հրաժարական տուեց: Քոչարեանը նրանց հետ եկաւ իշխանութեան, որից յետոյ ապամոնտաժեց ռազմա-ֆէոդալական օլիգարխիան, նրանց մի մասին բերելով պայմանաւորուածութիւնների դաշտ: Քոչարեանը հաստատեց քվոտաների ու զոնաների կուռ համակարգ, ինքը մնալով «արբիտրի» դերում: Այսինքն, երկրում հաստատուեց քրէա-օլիգարխիկ դասական համակարգ:*

*2007-ի խորհրդարանի ընտրութիւնից առաջ Քոչարեանը ստեղծեց ԲՀԿ-ն, որը պէտք է վերջ տար ՀՀԿ-ում հաւաքուած օլիգարխների քաղաքական ու տնտեսական մենաշնորհներին: Քոչարեանի նախագահութեան վերջին շրջանում նրա տնտեսական խորհրդական Վահրամ Ներսիսեանցը եւ Վարդան Օսկանեանը սկսել էին ծրագրային ելոյթներ ունենալ մենաշնորհների վերացման, հաւասար մրցակցային պայմանների, բիզնես քաղաքակիրթ միջավայրի եւ այլնի վերաբերեալ:*

**Բոլորը խօսում են օլիգարխիկ համակարգը փոխելու մասին, սակայն նա է առայժմ փոխում երկիրն այնպէս, ինչպէս իրեն է ձեռնտու**

*Սակայն օլիգարխիան Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ իրականացրեց ներիշխանական յեղաշրջում եւ խորհրդարանում վերցրեց բացարձակ մեծամասնութիւնը, մէկ տարի անց դառնալով նախագահ:*

*Սերժ Սարգսեանը, սակայն, նախագահ դառնալուց յետոյ նոյնպէս սկսեց խօսել օլիգարխիկ համակարգի վերափոխման անհրաժեշտութեան մասին: Մանաւանդ որ, եթէ Քոչարեանը համակարգում «արբիտր» էր, Սերժ Սարգսեանը չունէր նման կարգավիճակ եւ համակարգի կողմից ընդունւում էր ընդամէնը որպէս իրենցից մէկը: 2012-ի խորհրդարանի ընտրութիւնից առաջ նա խօսում էր խորհրդարանը օլիգարխներից ազատելու մասին, սակայն օլիգարխները կրկին վերցրեցին բացարձակ մեծամասնութիւնը, իսկ այս տարուայ գարնանը տեղի ունեցաւ օլիգարխիայի հերթական «յեղաշրջումը», այս անգամ նաեւ Քոչարեանին լոյալ ուժերի մասնակցութեամբ, եւ Յովիկ Աբրահամեանը նշանակուեց վարչապետ:*

*Օլիգարխներին փորձեց խաղի մէջ ներքաշել Լեւոն Տէր-Պետրոսեանը, 2007-08 թթ. շարժման ժամանակ, նրանց գգուշացնելով, որ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը նրանց բոմժ են դարձնելու: Տէր-Պետրոսեանի կոչը երեւում է «հայաստանածին» օլիգարխները ճիշդ էին հասկացել:*

*Այսպիսով, օլիգարխիան մնում է միակ իրական ուժը Հայաստանում, այս կամ այն կոնֆիգուրացիայով: Թէ ինչ որակների, արժէհամակարգի ու մոտիւացիաների կրող է հայկական օլիգարխիան՝ կրկնելու անհրաժեշտութիւն չկայ: Սակայն, շատերն են պնդում, այդ թւում քաղաքական ուժերը, որ այդ արժէհամակարգը եւ որակները հայ հանրութեան մեծ մասի որակների խտացումն է, որն առաւել վառ է արտայայտուած հենց հանրութեան ակտիւ ու կենսունակ մասի՝ օլիգարխիայի մօտ: Օլիգարխիան այն բարձրագոյն կերպարն է, որին ձգտում է հայ հանրութիւնը՝ շարքայինից մինչեւ ուսեալ, գիտակից խաւեր, որոնք ներկայում տեղաւորուած են «քվոտաների» շրջանակներում: Այդ շրջանակները գնալով լայնանում են, ներառելով նորանոր շերտեր ու խաւեր, եւ հենց այդ պատճառով է օլիգարխիան ուժեղ ու կենսունակ: Պէտք է նշել, որ այս տեսակէտը հեռու չէ ճշմարտութիւնից:*

*Ինչպէ՞ս ապամոնտաժել այս համակարգը, որը համընդհանուր խոստովանութեամբ դարձել է երկրի զարգացման թիւ մէկ խոչընդոտը: Կա՞յ Հայաստանում որեւէ քաղաքական ուժ, խումբ, հանրային խաւ, որն իր առջեւ նման խնդիր է դրել, թէ օլիգարխիան դիտարկուելու է ընդամէնը միմիանց «վախեցնելու» ու քվոտաներ ստանալու միջոց:*

*Քանի դեռ նման խնդիր չկայ, բոմժ են դառնալու ոչ թէ օլիգարխիան, այլ հայկական պետութիւնն ու հանրութիւնը: Բոլորը խօսում են օլիգարխիկ համակարգը փոխելու մասին, սակայն նա է առայժմ փոխում երկիրն այնպէս, ինչպէս իրեն է ձեռնտու:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Հրաշալի զոյգ դառնալու ուրուականն արդէն պտտւում է

*ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ*

*Հրաշալի քառեակի՝ եռեակ դառնալու առաջին իսկ օրից զուգահեռ կանխատեսումներ հնչեցին, որ եռեակն էլ երկար չի «ձգի» եւ մեծ է հրաշալի եռեակի զոյգ դառնալու հաւանականութիւնը: Կանխատեսումները երկար սպասեցնել չտուեցին. եռեակում արդէն նկատելի են խմորումները եւ բնականաբար, մեծն աղօթարարի կուսակցութիւնը առաջին յարմար պահին կը լքի քառեակը՝ շարժուելով դէպի ՀՅԴ տանող ապահով ուղղութեամբ: Ժառանգութիւնը յայտարարում է, որ եթէ նոյնիսկ ոչ իշխանական եռեակը միասնական դիրքորոշում չունենայ, իրենք հանրահաւաքին բարձրացնելու են ամբողջական իշխանափոխութեան հարցը:*

*«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը հասկանալի ենթատեքստով ընդգծել է, որ եթէ իշխանափոխութեան հարցը օրակարգային հարց չդառնայ, «Ժառանգութիւնը» կարող է քաղաքացիներին հարցնել. «Գուցէ քաղաքացիներն իսկապէ՞ս կողմ են ամբողջական իշխանափոխութեանը, կամ գուցէ դէմ են դրան, ասում են՝ այսօրուայ իշխանութիւններն ուղղակի հրաշալի են, մենք էնքան ենք իրենց սիրում, որ էդ սիրուց թողնումփախնում ենք»: Հասկանալի է, որ Հայաստանում ամէն երկրորդ հայն այսօր իշխանափոխութեան երազանքով է ապրում, մինչդեռ այս հարցից եռեակի ամենազօր ուժը ԲՀԿ-ն ու դրա անդամները ասես սարսափահար են լինում:*

*Նոյնիսկ հիմա, երբ յստակ յայտարարուած է սահմանադրական բարեփոխումների դէմ պայքարն անխուսափելի է եւ եռեակն անգամ հանրահաւաքի օրն է որոշել, արձագանքելով Արմէն Մարտիրոսեանի յայտարարութեանը ԲՀԿ-ական Միքայէլ Մելքումեանը հնարաւորինս խուսափել է իր խօսքում «իշխանափոխութիւն» բառն անգամ օգտագործել: ԲՀԿ-ականը իհարկէ ուղիղ չի ասել, որ Արմէն Մարտիրոսեանը «ղալլաթ» է արել, որ այդպիսի բան է յայտարարել, սակայն 168.am-ի հետ զրոյցում պատասխանելով հարցին՝ արդեօք իրենց օրակարգո՞ւմ էլ կայ՝ Հոկտեմբերի 10-ին կայանալիք եռեակի հանրահաւաքին բարձրացնել ամբողջական իշխանափոխութեան հարցը, նա զարմացել է, թէ կարծում էք, որ եռեակի իւրքանչիւր ուժ պէտք է առանձին-առանձին պահանջ ներկայացնի՞ ու ընդգծել, որ հանրահաւաքի օրակարգը միասնական է որոշուելու:*

*Մելքումեան, լաւ իմանալով, որ Ժառանգութեան վրայ յոյս դնել պէտք չէ եւ որ «Ժառանգութիւնը» ՀԱԿ չէ, որ անվերապահ ընդունի ԲՀԿ-ի բոլոր որոշումները, այնուամենայնիւ ապահովագրել է իր՝ իշխանափոխութեան պահանջից «դիւահար» լինող կուսակցութեանը. «Կարող է ելոյթում որ«է մէկը որ» է մի բան ասի, բայց դա չի նշանակում, որ եռեակի անունից է ասւում:*

*Այնպէս չէ, որ ելոյթները նախկին խորհրդային կարգով սահմանափակ է լինելու: Ամէն մարդ իր ելոյթում իր անձնական մօտեցումները կը ներկայացնի, բայց ինքն, ընդհանուր առմամբ, միասնական օրակարգով հանրահաւաք է լինելու»: Սակայն, հաշուի առնելով Արմէն Մարտիրոսեանի յայտարարութիւնը, որ անկախ հարցը եռեակի օրակարգ մտնելու փաստից «Ժառանգութիւնը» դա բարձրացնելու է եւ շօշափելու ժողովրդի տրամադրութիւնները , ինչպես նաեւ «Ժառանգութեան» ներսում տեղի ունեցող խմորումները, քանի որ այստեղ ի սկզբանէ փոստանջեանական թեւը կողմ չի եղել քառեակի գործունէութեանը, ապա չի բացառւում, որ «Ժառանգութիւնը» առաջին հանրահաւաքից յետոյ լքի եռեակը՝ յայտարարելով, որ նրանց խնդիրն իշխանափոխութիւնը չէ:*

*Միւս կողմից տարօրինակ է՝ եռեակի անդամներից երկուսը յայտարարում են, որ սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարելով փորձելու են կանխել իշխանութիւնների վերարտադրութիւնը, ուրեմն առնուազն անհասկանալի կը լինի, եթէ հանրահաւաքին չդրուի այս պահանջը, այլապէս ԲՀԿ-ն, որը երկրի նախագահի անունն աշխատում է հնարաւորինս չհոլովել «ամէն ինչ կապում է սոցիալ-տնտեսական վիճակի, ուրեմն պէտք է քննարկման առարկայ դարձնի սոցիալ-տնտեսական խնդիրներն ու լուծման ուղիներ առաջարկի, այլ ոչ թէ պայքարի Նոր Սահմանադրութեան դէմ: Այնպէս որ, այս խճճուած եւ անհասկանալի իրավիճակի միակ ելքը հերթական ապահարզանն է լինելու: Արդիւնքում իշխանութիւնը կը գրանցի հերթական յաղթական միաւոր իր օգտին՝ հանրութեանը ներկայացնելով, որ ընդդիմութիւն կոչուածը Հայաստանում միֆ է, պարզ աթոռակռիւ, չկայ միասնականութիւն, պայքար, սկզբունքայնութիւն:*

*«ՀԱՅԵԼԻ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հանրահաւաքին Եռեակը Կը Բարձրացնի՞ Իշխանափոխութեան Հարցը

Հոկտեմբերի 10-ին Ազատութեան հրապարակում կայանալիք եռեակի հանրահաւաքին յայտնի չէ՝ իշխանափոխութեան եւ Սերժ Սարգսեանի հրաժարականի հարց կը բարձրացուի, թէ ոչ:

«Ես բոլորիդ հրաւիրում եմ Ազատութեան հրապարակ, Ձեզ յուզող բոլոր հարցերի պատասխանները Ազատութեան հրապարակում ելոյթների ժամանակ կ'ստանաք»,-NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը՝ անդրադառնալով հարցին, թէ արդեօք այս խնդրի շուրջ տարաձայնութիւններ կան երեք ուժերի միջեւ:

«Ժառանգութեան» փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանն էլ մեզ հետ զրոյցում ասաց, որ այդ հարցը կը քննարկի աշխատանքային խումբը եւ դիրքորոշում կը յայտնի: «Ես կարծում եմ, որ այդ պահանջը մեր քաղաքացիների մօտ կայ»,-ասաց նա:

Հայ Ազգային կոնգրէսի անդամ Զոհա Թադեւոսեանն էլ NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց, որ շատ կը ցանկանար, որ այդ հարցը բարձրացուէր: «Լրիւ ժամանակն է այդ հարցը բարձրացնելու, այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում, իշխանութիւնները բոլոր սահմանները անցել են, հետեւաբար իշխանափոխութեան ժամանակը վաղուց եկել է եւ այդ կոչերը պէտք է լինեն հրապարակում: ՀԱԿ-ը միշտ ցանկացած միջոցառման ժամանակ այդ կոչերը պարտադիր բարձրաձայնում էր, Սերժ Սարգսեանի հրաժարականը եւ իշխանափոխութիւնը մեր դիրքորոշումն է, որը վստահ եմ՝ չի փոխուել, իսկ թէ ինչպէս կ'արձագանքեն դրան միւս ուժերը, չեմ կարող ասել»,-ասաց Զոհա Թադեւոսեանը:

Նշենք, որ մի շարք լրատուամիջոցների փոխանցմամբ՝ հակասութիւններ են առաջացել «եռեակում» Հոկտեմբերի 10-ի հանրահաւաքում իշխանափոխութեան հարց բարձրացնելու խնդրի շուրջ: ԲՀԿ-ն դէմ է իշխանափոխութեան կամ Սերժ Սարգսեանի հրաժարականի պահանջին, միւս երկու ուժերը (ՀԱԿ, «Ժառանգութիւն») կողմ:

«Հարցեր կան, որոնք բնականաբար պէտք է հնչեն, բայց օրակարգ ենք ձեւաւորում, որտեղ ամենատարբեր պահանջները կարող են լինել»,-Այս մասին նիստից յետո լրագրողներին յայտնել է «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը: Յաւելելով, որ յստակ չէ նաեւ եռեակի ուժերի առաջնորդների մասնակցութեան հարցը:

## ՀՀ Քաղաքացիութիւնից Հրաժարուելու Միտում Է Նկատւում

Հայաստանի արտգործնախարարութեան Հիւպատոսական վարչութեան պետ Վլադիմիր Կարմիրշալեանի խօսքով, Ռուսաստանի քաղաքացի դառնալու նպատակով վերջին շրջանում Հայաստանի քաղաքացիութիւնից հրաժարուելու միտում է նկատւում:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան բարձրաստիճան պաշտօնեան այս մասին յայտնեց Սեպտեմբեր 24-ին լրագրողների հետ կայացած ճեպազրոյցի ընթացքում:

«Ձեմ ասի, որ քաղաքացիութիւնից հրաժարուողների քանակն այդքան մեծացել է, բայց նկատի ունենալով վերջին օրէնսդրական փոփոխութիւնները Ռուսաստանում, այո, կայ այդպիսի տենդենց, մասնաւորապէս, այն մարդկանց կողմից, ովքեր որոշել են իրենց կեանքը, իրենց գործունէութիւնը հաստատել Ռուսաստանում: Դա պայմանաւորուած չէ իրենց ձգտումով մոռանալ, լքել Հայաստանը, ուղղակի զուտ գործնական տեսանկիւնից իրենք որոշել են եւ, նորից եմ ասում, նկատի ունենալով ռուսական օրէնսդրութեան մի շարք փոփոխութիւնները՝ որոշել են նման ձեւով վարուել», - ասաց նա:

Դիտարկմանը, թէ օրէնսդրական փոփոխութիւններ անելով նկատի ունի, որ Ռուսաստանում արգելուած է երկքաղաքացիութիւնը, Կարմիրշալեանը պատասխանեց.- «Էդպէս ուղղակիօրէն արգելուած չէ. ռուսական օրէնքը պարտադրում է այն մարդկանց, ովքեր ուզում են ստանալ Ռուսաստանի քաղաքացիութիւն, իրազեկել Ռուսաստանի իշխանութիւններին այլ պետութեան քաղաքացիութիւն ունենալու մասին»:

Կարմիրշալեանը թուեր չնշեց: Փոխարէնը, այս տարի աւելի վաղ Միգրացիոն պետական ծառայութեան պետ Գագիկ Եգանեանը «Ազատութեան»-ը ասել էր, որ այսօր Հայաստանի բնակչութեան մօտ տասը տոկոսը՝ առաւելագոյնը 300 հազար մարդ Ռուսաստանի քաղաքացիութիւն ունի:

Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտի ղեկավար Ստիոպա Սաֆարեանն «Ազատութեան» հետ զրոյցում իր մտահոգութիւնը յայտնեց, որ հայաստանցիները շարունակում են ձեռք բերել Ռուսաստանի քաղաքացիութիւն: Ըստ Սաֆարեանի, նման կերպ Մոսկուան լծակ է ձեռք բերում Հայաստանի ներքին գործերին միջամտելու համար:

«Ռուսաստանի այս նոր քաղաքականութեան կոնցեպցիայում առանցքային տեղ է զբաղեցնում Ռուսաստանի քաղաքացիներին պաշտպանութեան թէզը, որի անուան տակ նա, ըստ էութեան, ներխուժեց Ղրիմ, որի անուան տակ նա օրինականացնում է իր գործողութիւնները»:

## «Ռուսաստանի Նկատմամբ Կիրառուող Պատժամիջոցները Բնականաբար Կ'ազդեն Հայաստանի Վրայ». ՀՀԿ պատգամաւոր

ԱԺ «Հանրապետական» խմբակցութեան անդամ Լեռնիկ Ալեքսանեանը գտնում է, որ Ռուսաստանի նկատմամբ կիրառուող պատժամիջոցները բնականաբար կ'ազդեն Հայաստանի վրայ, իսկ թէ ի՞նչ ծաւալով, դժուար է ասել: Ըստ նրա՝ արդիւնքում կը լինեն դրական եւ բացասական բաղադրիչներ:

«Մենք հնարաւորութիւն ունենք ճիշդ, արդիւնաւէտ օգտագործել պահերը, առաւել եւս՝ գիւղատնտեսութեան զարգացման առումով»,-ասաց նա:

Լեռնիկ Ալեքսանեանը գտնում է, որ անցած տարի Աեպտեմբերի երեքի ՀՀ Նախագահի յայտարարած որոշումը յանկարծակի չի կայացուել, քանի որ Հայաստանն իննսունական թուականներից սկսած ռազմավարական գործընկերութիւն ունի Ռուսաստանի հետ, եւ այդ յարաբերուիւնները պատահական չեն: Նա նաեւ նկատեց, որ Հայաստանը փորձում է յարաբերութիւնները զարգացնելմ նաեւ ԵՄ-ի:

Tert.am-ի հարցին, թէ հաշուի անելով, որ Ռուսաստանի տնտեսութեան վրայ բացասական են անդրադառնում պատժամիջոցները, ՀՀԿ-ն նոյն լաւատեսութիւնը շարունակո՞ւմ է ունենալ ԵՏՄ անդամակցութեան առումով, Լեռնիկ Ալեքսանեանը պատասխանեց. «Եթէ գործընթացը սկսուել է, ապա քաղաքական, բարոյական առումով հետ կանգնելը ճիշդ չի լինի»:

Ըստ նրա՝ ոչ ոք չգիտի, թէ այդ պատժամիջոցները ինչպիսի աւարտ են ունենալու եւ նա չի բացառում, որ Ռուսաստանը, որ ունի հզօր ռեսուրսներ, հնարաւոր է՝ այդ ամբողջից շահած դուրս գայ, զարգացնի այն ոլորտները, որոնք թոյլ էին:

«Հայաստանն աւելի շատ հնարաւորութիւն ունի Եւրասիական Միութեան հետ համագործակցելու, քանի որ կան ընդհանուր կապեր, շահեր, միասին ապրած ժամանակահատուած»,-ասաց նա:

## Մակէեան. «Քառեակը Ղեկավարում Են Երկրորդ Եւ Երրորդ Նախագահները»

Հայաստանում ոչ իշխանական խորհրդարանական ուժերի քառեակի գործունէութիւնը հիմնականում վերահսկում են երկրորդ նախագահ Ռոբերդ Քոչարեանը եւ գործող նախագահ Սերժ Սարգսեանը: Նման միտք է արտայայտել ,Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէեանը սեպտեմբերի 22-ի մամուլի ասուլիսում:

Ըստ նրա՝ յայտնի է, որ ,Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ստեղծել է Քոչարեանը: ,Ցաւօք, ՀԱԿ-ի մեր նախկին համախոհները սպասարկում են ,Բարգաւաճ Հայաստանի» շահերը: Վերջին ժամանակներս պարզ դարձաւ, որ ,Ժառանգութիւն» կուսակցութիւնը կարծես թէ նոյնպէս իր գործունէութիւնն իրականացնում է Քոչարեանի ստուերում: Հասկանալի չէ՝ ՀՅԴ-ն այսօր իշխանութիւն է, թէ ընդդիմութիւն», - նշել է Մակէեանը:

Ըստ նրա՝ ՀՅԴ-ն փորձում է խաղալ Սերժ Սարգսեանի եւ Ռոբերդ Քոչարեանի միջեւ: ,Եթէ խորհրդարանական եռեակում շարժիչ ուժը ԲՀԿ-ն է, ապա երկրում ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունենայ», - ընդգծել է ,Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան առաջնորդը:

## «Հոկտեմբերի 27-ը Հնարաւոր Կը Լինէր Կանխել, եթէ Մարդիկ Ծանօթ Լինէին «Քրոնիկոնում» Ներկայացուած Փաստերին». Սերգէյ Գալոյեան

Քրեագէտ Սերգէյ Գալոյեանը նոր «Քրոնիկոն» գրքում ներկայացրել է պատմութեան մէջ իրականացուած հետաքրքիր յանցագործութիւնները: Մամուլի ասուլիսի ընթացքում նա ասաց, որ գրքում անդրադարձել է օրինակ՝ 1975 թուականի Մոսկուայի մետրոյի պայթիւնին, ինչի համար Ստեփան Զատիկեանը եւ նրա երկու ընկերները մեղադրուել էին, եւ նա գրքում ապացուցում է, որ այդ մեղադրանքը կեղծ է եղել, քանի որ այդ ընթացքում Ստեփան Զատիկեանն ու նրա երկու ընկերները Մոսկուայում չեն եղել:

«Հայաստանի իրականութեան մէջ այսպիսի գիրք գոյութիւն չունի, իսկ Ռուսաստանում միայն մէկ հատ կայ: Բոլոր փաստերը ճշգուած են մինչեւ վերջ: Տասնմէկ տարի ես հաւաքել եմ այս տուեալները»,- ասաց նա:

Քրեագէտը գտնում է, որ այս գիրքը պէտք է տպագրէին իրաւապահ մարմինները, քանի որ նրանց համար է այն անհրաժեշտ:

Անդրադառնալով «Հոկտեմբերի 27-ի» դէպքերին, բանախօսն ասաց, որ թէեւ մենք այն համարում ենք ունիկալ յանցագործութիւն, սակայն ԱԺ ներխուժելու փորձ եւս 3 երկրում եղել է: «Դա հնարաւոր կը լինէր կանխել, եթէ մարդիկ գոնէ մի քիչ ծանօթ լինէին այստեղ ներկայացուած փաստերին: Այս գիրքը հայ ընթերցողին կը տայ այն, ինչ ինքը չգիտեր, չգիտեր, որ ցանկութեան դէպքում կարելի էր կանխել «Հոկտեմբերի 27-ը», խելօք մարդիկ դա կը կանխէին, եթէ այս տուեալները նրանց ձեռքում լինէին»,- ասաց նա:



Քրեագէտ Սերգէյ Գալոյեան

Խօսելով բանդայի գործի մասին՝ Սերգէյ Գալոյեանն ասաց, որ բանդայի գործով վաղը շատ կարեւոր յայտարարութիւն է լինելու: «Ես արդէն ուսումնասիրել եմ այդ գործը, եւ այս դատավարութիւնը պարզապէս թատրոն է»,-ասաց նա եւ նշեց, որ քննիչի նախաքննական ցուցմունքների հիման վրայ կազմուած մեղադրական եզրակացութիւնը համընկել է դատախազի մեղադրական ճառի հետ:

Քրեագէտն իր գրքում անդրադարձ է կատարել նաեւ «Մարտի 1-ին»: «Որեւէ մէկը չի կարող ասել, թէ քանի մարդ է մահացել, առաւել եւս անուն ազգանունները չեն կարող ասել»,- ասաց նա եւ ասաց, որ գրքում ներկայացրել է, թէ ինչ է եղել Մարտի 1-ին, ովքեր են յարձակուել, ինչ զէնք է մատակարարուել:

## ԼՈՒՐԵՐ

# Սերժ Սարգսեան Ընդունեց Սուրիահայ Պատուիրակութիւն մը



Սուրիահայ ներկայացուցիչներու հանդիպումը ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը Երկուշաբթի, Սեպտեմբեր 22-ին ընդունեց Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած սուրիահայ համայնքային կառոյցներու, կազմակերպութիւններու եւ հոգեւոր դասի ներկայացուցիչները՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Բերիոյ թեմի առաջնորդ Տէր Շահան արքեպիսկոպոս Սարգիսեանը, Սուրիոյ Հայ Աւետարանական եկեղեցիներու համայնքապետ Յարութիւն Սելիմեանը, ՀՅԴ ներկայացուցիչ Կարապետ Եիւզպաշեանը, ՌԱԿ Հիւսիսային Սուրիոյ շրջանային վարչութեան ատենապետ Լեւոն Պըլըքեանը, ՍԴՀԿ Հալէպի շրջանի ատենապետ Սարգիս Գալայճեանը, ՀՅԴ ներկայացուցիչ Ժիրայր Ռէյիսեանը:

Կողմերը հանդիպումին անդրադարձած են սուրիական ճգնաժամի հետեւանքով այսօր ալ դժուարին ու տագնապալի օրեր ապրող սուրիահայ համայնքի խնդիրներուն, անոնց լուծման ուղղութեամբ հայկական բոլոր կառոյցներու ներգրաւուածութեան, Սուրիայէն Հայաստան տեղափոխուած սուրիահայերուն Հայաստանի մէջ ցուցաբերուող աջակցութեան ու յառաջիկայ ծրագիրներուն:

Քննարկուեցան Մերձաւոր Արեւելքի վտանգուած քրիստոնեայ համայնքներու վիճակը, այդ տարածաշրջանին մէջ քրիստոնէական հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդիրներն ու համազգային մարտահրաւէրները: Զրուցակիցները իրենց լուրջ մտահոգութիւնը յայտնեցին եւ խստօրէն դատապարտեցին Կիրակի, 21 Սեպտեմբեր 2014-ին ահաբեկիչներու կողմէ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած, Մեծ եղեռնի բազմաթիւ նահատակներու մասունքները ամփոփող Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ եւ Մեծ եղեռնի Նահատակաց յուշահամալիրին բարբարոսաբար պայթումի արարքը:

Վերոնշեալ խնդիրներու լուծման, առկայ մարտահրաւէրներու դիմակայման, այդ նպատակով ազգային շահերու եւ նպատակներու շուրջ հայութեան համախմբման գործին մէջ ընդգծուած է Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովի Յայտարարութեան մէջ տեղ գտած առաջնահերթութիւններու եւ դրոյթներու կարեւորութիւնը:

# Թուրքիայի Դասագրքերում Շարունակում Են Հայերին Ներկայացնել Թուրքերին Կոտորողներ

Թուրքիայի նոր դասագրքերում շարունակւում են հայերի հանդէպ թշնամանք հրահրող ձեւակերպումներ, որոնց հետ կապուած Թուրքիայի ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» (CHP) կուսակցութեան փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն գրաւոր հարցադրում է արել երկրի կրթութեան նախարարին:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ CHP-ի փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն Թուրքիայի կրթութեան նախարար Նաբի Ավջըին ուղղուած հարցադրման մէջ նշել է, թէ տեղեկութիւններ կան, որ 8-րդ դասարանի դասագրքերում հայերը ներկայացւում են երկիրը բաժանողներ, թուրքերին ու մուսուլմաններին կոտորողներ եւ իրենց նպատակին հասնելու համար յօրինել են ցեղասպանութեան մասին ստեր:

«Ճի՞շտ են այս պնդումները: Եթէ ճիշդ են, ապա հետաքննութիւն սկսուե՞լ է կամ սկսուելու է մեղաւորներին պատժելու համար: 8-րդ դասարանի դասագրքերում ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ թշնամութիւն հրահրող նյութերի հետ կապուած ստուգումներ իրականացւո՞ւմ են»,- հարցրել է Սեզգին Թանրըքուլուն իր գրաւոր հարցադրման մէջ:

Նշենք, որ վերջին օրերին տեղեկութիւններ էին յայտնուել, որ թուրքական դասագրքերում կրկին հայերի հանդէպ թշնամանք եւ ատելութիւն սերմանող ձեւակերպումներ կան:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# «ԵՄ-ն եւ Հայաստանը Պէտք է Ստեղծեն Յարաբերութիւնների Նոր Հիմք»

Եւրոպական Միութեան ընդարձակման եւ հարեւանութեան հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիւլէի մամլոյ քարտուղար Փիթեր Ստանոն «Ազատութիւն» ռադիոկայանին տուած բացառիկ հարցազրոյցում անդրադարձել է Եւրոպական Միութեան եւ Հայաստանի յարաբերութիւններին, այն կացութեանը, որը ստեղծուել է 2013 թուականի Սեպտեմբեր 3-ից յետոյ, երբ Նախագահ Սերժ Սարգսեանը հրապարակել է Մաքսային միութեանն անդամակցելու որոշումը:

Ստանոյի փոխանցմամբ՝ Սեպտեմբեր երեքեան շրջադարձից յետոյ պէտք է ստեղծել յարաբերութիւնների նոր հիմք:

«Եւրոպական Միութիւնը մօտ 3.5 տարի Հայաստանի հետ բանակցել է Ասոցացման պայմանագրի եւ դրա բաղադրիչ Ազատ առեւտրի համաձայնագրի շուրջ: Բայց յետոյ Հայաստանը վճռել է անդամակցել Մաքսային Միութեանը: Դրա արդիւնքում Ասոցացման պայմանագիրն այլեւս կիրառելի չէ», - ասել է Ստանոն:

Նա նշել է, որ այդ պայմանագրի որոշ տարրեր հետագայում, իհարկէ, կարող են օգտագործուել, երբ կողմերը ձեռնամուխ կը լինեն նոր յարաբերութիւնների մշակմանը:

Ֆիւլէի խօսնակը հաւաստիացրել է, որ Եւրոպական Միութիւնը եւ Հայաստանը մտադիր են շարունակել համագործակցութիւնը Արեւելեան գործընկերութեան շրջանակներում: Կողմերը մշտապէս շփման մէջ են:

Ստանոյի խօսքերով, Բրիւսելը ցանկանում է հասկանալ, թէ ինչպէս է Երեւանը մտադիր զարգացնել յարաբերութիւնները, հաշուի առնելով այն պարտաւորութիւնները, որոնք բխում են Մաքսային Միութեանն անդամակցելուց:

Անցեալ տարի Վիլնիւսում տեղի ունեցած Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովում Եւրամիութիւնը եւ Հայաստանն ընդունել են համատեղ հռչակագիր, վերահաստատելով, որ պատրաստ են զարգացնել կապերը:

«Մենք յատկապէս շահագրգռուած ենք զարգացնել համագործակցութիւնը ժողովրդավարական ինստիտուտներն ամրացնելու, մարդու իրաւունքների պաշտպանութիւնը բարելաւելու, քաղաքացիական հասարակութեանն աջակցելու, կոռուպցիայի դէմ պայքարելու ոլորտներում: Սրանք են առանցքային հարցերը, որտեղ կայ համագործակցութիւնը խթանելու հեռանկար»,- ասել է Փիթեր Ստանոն:

# Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Հայաստան-Սփիւռք 5-րդ Համաժողովը

Շարունակուած էջ 1-էն

մէջ է, որ կը գումարուի այս խորհրդաժողովը: Արաբական գարունով սկիզբ առած աշխարհաքաղաքական փոփոխութիւններու ալիքը հասած է Եւրոպա եւ կարծէք պատմութեան ալիքը յամառօրէն կը փորձէ ետ շրջիլ, դէպի պաղպատերազմի ուղղութեամբ, վերակենդանացնելով արեւելք-արեւմուտք հակամարտութիւնը: Այս բոլոր երեւոյթ ները, նոր մարտահրաւէր ներու եւ վտանգներու առջեւ կը դնեն մեզ՝ Հայաստանէն մինչեւ Սփիւռք, յատկապէս Միջին Արեւելքի հայկական գաղութներու վիճակին առումով: Եռամիասնութիւնը կը դառնայ աւելի կենսական եւ այժմէական: Չենք կրնար ակնկալել, որ մէկ համաժողովով լուծուին մեր բոլոր հարցերը:

Բայց յոյս ունինք, որ այս համաժողովէն դուրս կու գանք գործնական ծրագրով մը, որ կ'ունենայ շարունակական ընթացք եւ կ'ունենայ շօշափելի արդիւնքներ«, ըսաւ Ընկ. Տիգրանեան: Ապա, ան կուսակցութեան անունով ընդգծեց շարք մը կէտեր, որոնք կ'առնչուին համաժողովի օրակարգային հարցերուն հետ:

«Առաջին՝ ստեղծել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները կարգաւորող եւ համազգային կարեւորագոյն հարցերուն վերաբերեալ ռազմավարութիւն մշակող մարմին մը, որուն դերը պէտք է ըլլայ Ցեղասպանութեան հարցի հետապնդման ընդհանուր ռազմավարութիւն մը, այնպէս որ հաշուի առնուին Հայաստանի պետական շահերը եւ Սփիւռքի ակնկալութիւնները:

«Երկրորդ՝ պատրաստել հատուցման ամբողջական թղթածրար մը եւ այդ առումով աշխատիլ ազդեցիկ երկիրներու հետ:

«Երրորդ՝ Հայաստան ապաստանած սուրիացիներու հիմնախնդիրներու քննարկման ընթացքին անդրադառնալ եւ մշակել տարբերակային ծրագիր՝ անհրաժեշտութեան պարագային Սուրիոյ հայահոծ շրջաններու բնակիչներու ապահով դուրս բերման եւ հայրենիքի մէջ բնակեցման մասին:

«Չորրորդ՝ Արցախի անկախութեան ճանաչման հոլովոյթը վերածել առաջնահերթութեան» ըսաւ Ընկ. Տիգրանեան (Ելոյթը ամբողջութեամբ տեսնել ներքին էջերուն մէջ):

Բացման պաշտօնական հանդիսութենէն ետք բոլոր մասնակիցները ուղղուեցան «Էլիթ Փլազա» կեդրոն, ուր տեղի ունեցան համաժողովի նիստերը:

Առաջին նիստի մասնակիցները քննարկեցին Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, դատապարտման եւ հետեւանքներու վերացման հոլովոյթը: Երկրորդ նիստին ընթացքին քննարկուեցան սուրիահայ համայնքի հիմնախնդիրները: Հայաստան-Սփիւռք գործակցութեան ներկայ հիմնախնդիրները եւ հեռանկարները արծարծուեցան երրորդ նիստին ընթացքին: 4-րդ նիստը նուիրուած էր լրագրողներու համահայկական 7-րդ համաժողովին:

Բոլոր նիստերուն ընթացքին քննարկուեցան նիւթերուն յատուկ թղթածրարներ:

Նիստերը շարունակուեցան յաջորդ օրը եւ ապա տեղի ունեցաւ փակման հանդիսութիւնը, որու ընթացքին ելոյթ ունեցաւ Նախագահ Սերժ Սարգսեան եւ ներկայացուեցաւ Համագումարի վերջնական յայտարարութիւնը:

## ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանի Խօսքը Հայաստան-Սփիւռք 5-րդ Համաժողովին



*Յարգարժան Վարչապետ Հայաստանի Հանրապետութեան՝ Պրն. Յովիկ Աբրահամեան*

*Մեծարգոյ Սփիւռքի Նախարարուհի՝ Հրանուշ Յակոբեան,*

*Յարգելի պետական այրեր եւ տիկնայք, քաղաքական եւ յարանուանական համայնքներու պատկառելի ներկայացուցիչներ,*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անունով կ՛ողջունեմ Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովի բոլոր մասնակիցներուն եւ լիայոյս եմ, որ այս կարեւոր մեկտեղումը կ՛ըլլայ նպատակային եւ արդիւնաւէտ:*

*Իսկապէս համաշխարհային ծանր տագնապներու մթնոլորտի մէջ է, որ կը գումարուի այս համաժողովը: Արաբական գարունով սկիզբ առած աշխարհաքաղաքական խորքային փոփոխութիւններու ալիքը արդէն հասած է Եւրոպա եւ կարծէք պատմութեան անիւը յամառօրէն կը փորձէ ետ շրջիլ դէպի սառը պատերազմի ուղղութեամբ վերակենդանացնելով Արեւելք-Արեւմուտք հակամարտութիւնը: Այս բոլոր երեւոյթները նոր մարտահրաւէրներու եւ ինչու չէ նաեւ վտանգներու առաջ կը դնեն մեզ Հայաստանէն մինչեւ Սփիւռք, յատկապէս միջին արեւելքի հայ գաղութներու լինելիութեան տեսակէտով:*

*Այդ առումով, Հայաստան-Արցախ-Սփիւռք կապերու առաւել ամրապնդումն ու սերտ համագործակցութիւնը կը դառնան ա՛լ աւելի կենսական եւ այժմէական:*

*Ի հարկ է, չենք կրնար ակնկալել, որ մէկ համաժողովով կարելի պիտի ըլլայ լուծում տալ մեր դիմագրաւած բոլոր հարցերուն, բայց կը յուսանք, որ այս համաժողովէն դուրս կուգանք գործնական ծրագրով մը, որ կ՛ունենայ շարունակական ընթացք եւ կուտայ շօշափելի արդիւնքներ: Կը կարեւորենք այս հանգամանքը, նախ նկատի ունենալով հարցերու հրատապութիւնը, մանաւանդ օրակարգի 4-րդ հարցի առումով եւ ելլելով նախորդ չորս համաժողովներու փորձառութենէն, ուր առնուած որոշումներն ու ծրագիրները մեծ մասամբ մնացին թուղթի վրայ եւ անկատար:*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անունով կ՛ուզենք ընդգծել հետեւեալ կէտերը, որոնք կ՛առընչուին օրակարգի բոլոր հարցերուն՝*

*Ա. Ստեղծել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները կարգաւորող եւ համազգային կարեւորագոյն հարցերու վերաբերեալ ռազմավարութիւն մշակող մշտական մարմին մը: Օրինակ այդ մարմնի պարտականութիւնը պէտք է ըլլայ մշակել հայ դատի հետապնդման ընդհանուր ռազմավարութիւն ուր պէտք է, Հայաստանի եւ Սփիւռքի դերերու յստակ բաժանում կատարուի եւ անպայման հաշուի առնուին Հայաստանի պետական շահերը եւ Սփիւռքի ակնկալութիւնները:*

*Բ. Ցեղասպանութեան 100-ամեակի նշման զուգահեռ պատրաստել հատուցման իրաւական եւ ամբողջական թղթածրար եւ այդ առումով ազդեցիկ երկիրներու հետ համապատասխան աշխատանք տանիլ:*

*Գ. Հայաստանի Հանրապետութեան մէջ ապաստանած Սուրիահայերու հիմնախնդրի քննարկման ընթացքին անդրադառնալ եւ մշակել տարբերակային ծրագիր (*contingency plan*) սուրիաբնակ, մանաւանդ հայահոծ շրջաններու մէջ այսինքն Հալէպ եւ Դամասկոս, մեր հայրենակիցներուն՝ ի պահանջել հարկին ապահով դուրս բերման եւ մայր հայրենիք վերաբնակեցման վերաբերեալ:*

*Դ. Արցախի Անկախ հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթացը վերածել առաջնահերթութեան:*

*Բարի երթ Հայաստան-Սփիւռք 5-րդ Համաժողովին:*

## Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԿ. ՎԱԶԳԷՆ ԳԱԼԹԱՔՃԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ ՄԽԻԹԱՐ ԳՕՇԻ ՄԵՏԱԼՈՎ

Հայաստանի անկախութեան տօնին առիթով, ինչպէս նաեւ իր ծաւալած հայանպաստ ակնառու գործունէութեան, Հայրենիք-Սփիւռք կապերու ամրապնդման ներդրած նշանակելի աւանդին համար Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Լուիզիանայի Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ՝ ընկ. Վազգէն Գալթաքճեան կը պարգեւատրուի Մխիթար Գօշի մետալով:

## ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Փոխատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեանի Խօսքը Հայաստանի Խորհրդարանին մէջ



*Հայաստանի Հանրապետութեան Ազգայի Ժողովի մեծարգոյ Նախագահ,*

*Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի յարգելի պատգամաւորներ, Հա յաստան-Սփիւռք համա ժողովի մասնակիցներ եւ հիւ րեր...*

*Անշուշտ, մեծ պատիւ է այսպիսի բարձր ամպիոնէ, Սփիւռքի տարբեր երկիրներու հայազգի պատգամաւորներու հաւաքական մեր ողջոյնի խօսքը յղել համաժողովի մասնակիցներուն, եւ հիւրերուն մաղթել բեղմնաւոր աշխա տանք ու առաւել սերտ համագործակցութեան ու միասնական մարտավարութեան որդեգրում:*

*Գաղտնիք չէ, որ Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցին մօտեցնող ամէն մէկ օրուան հետ քաղաքակիրթ աշխարհը աւելի ու աւելի պիտի սեւեռուի Հայաստան Աշխարհի եւ Սփիւռքի մէջ տեղի ունեցող քաղաքական ու մշակութային ձեռնարկներու, քաղաքական ու գիտական ծանրակշիռ գիտաժողովներու վրայ եւ այս պարագային սերտ համագործութեամբ ու միասնական մարտավարութեամբ հանդէս գալը՝ պարգապէս հրամայական կը դառնայ:*

*Այսօրինակ համագործակցութեան մը արդիւնաւէտութիւնը ապացուցելու համար հեռուն երթալու պէտք չունինք: Կը բաւէ միայն, եթէ յիշենք, թէ հայկական բանակը զուսպ արժանապատուութեամբ ինչպիսի հակահարուած տուաւ թուրք-ազերիական՝ առաջին ակնարկով յախուռն, սակայն իրականութեան մէջ մանրակրկիտ ծրագրուած սադրանք-ոտնձգութիւններուն: Մենք հոս Հայ Զինուորին արժանապատիւ կեցուածքը չեշտեցինք, քանի որ համոզուած ենք, որ համարժէք ուժային պատասխաններուն զուգահեռ՝ նաեւ այդ կեցուա՛ծքն էր, որ խթանեց համաշխարհային ծանրակշիռ քաղաքական կեդրոններն ու լրատուամիջոցները, որպէսզի անոնք բաւական կոշտ ու ճշմարիտ գնահատականներու արժանացնեն ստոր սադրանքներու կազմակերպիչներն ու անոնց մեծ ու փոքր արբանեակները:*

*Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւորական տարբեր խումբերու, նախարարներու եւ բարձրաստիճան պաշտօնեաներու պարբերական այցելութիւնները սահմանային յենակէտեր ու սահմանամերձ գիւղեր՝ յիշեալ արժանապատիւ կեցուածքին տրամաբանական շարունակութիւնը կը հանդիսանան:*

*Վստահ ենք, նկատելի յաջողութիւնները երկար սպասել չեն տար, եթէ այդ դրական փորձը տարածուի նաեւ մեր կենսագործունէութեան մի՛ւս ոլորտներուն վրայ՝ արտաքին քաղաքականութենէն մինչեւ գիտա-կրթական հսկայ ներուժի ճշմարիտ ուղղորդում եւ կարգ մը ներքին քաղաքական խնդիրներէն մինչեւ մշակութային տարատեսակ ձեռնարկներու ծրագրաւորում եւ արտագաղթի խնդիրներէն մինչեւ աշխատատեղերու ստեղծում:*

*Յարգելի գործընկերներ, անշուշտ ողջոյնի խօսքը, այսպիսի հարցադրումներ հնչեցնելու յարմարագոյն ամպիոնը չէ, սակայն խօսքը ամբողջութեամբ անկեղծ պիտի չըլլար, եթէ գոնէ հպանցիկ չբաժնէինք նաեւ մեր մտահոգութիւննե՛րը: Վստահ ենք, որ համաժողովի ընթացքին կը ստանանք նաեւ այդ հարցերուն պատասխանները:*

*Բազմաշերտ ու բազմաճիւղ է Հայոց Սփիւռքը, սակայն մէկ բանի մէջ սկզբունքային իսկապէ՛ս շահեկան նմանութիւն մը կայ: Մենք բոլորս տարբեր երկիրներու Ազգային Ժողովներու պատգամաւորներ, նախարարներ եւ ընդհանրապէս պետական կառավարման մէջ ներգրաւուած պաշտօնեաներս՝ մեր բնակած երկիրներուն ներկայացուցիչները ըլլալէ բացի, նաեւ այդ երկիրներուն մէջ մեր ժողովուրդին ներկայացուցիչներն ենք եւ ակնկալուած սերտ համագործակցութիւնը՝ մեր իղձերու իրականացման, մեր հպարտ Հայրենիքի բարգաւաճման լաւագոյն գրաւականն ու երաշխիքը կրնան դառնալ:*

*Վստահ ենք, որ այսպիսի համագործակցութիւնը բոլորս պիտի հասցնէ շատ աւելիին, քան այսօր Սփիւռք-Հայաստան երկկողմ համագործակցութիւնն է: Այս ձեւով մենք վստահաբար կը հասնինք մէկ միասնական ու ամբողջական այն հանգրուանին, ուր առանց բացառութեան բոլորս, հաւասարապէս կը մասնակցինք մեր ժողովուրդին համար կարեւորագոյն հարցերու քննարկման եւ մարտավարական նոր ուղիներու հաստատման գործին:*

*Ժամն է, որ մեր տասը միլիոն հաշուող ժողովուրդը, աշխարհի ո՛ր անկեան մէջ ալ ըլլայ, բարձր պատասխանատուութեամբ իր գործնական մասնակցութիւնը բերէ Հայրենիքի մէջ կատարուող ամէն մէկ գործընթացի:*

*Մեզ միաւորող այս գործընթացները որակական նոր հարթութիւն տեղափոխելու պատասխանատու գործին մէջ ակնառու են Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանին ջանքերը:*

*Սփիւռք-Հայաստան համագործակցութեան մէջ իր անուրանալի վաստակը ունի նաեւ Հայաստանի Սփիւռքի Նախարարութիւնը, ղեկավարութեամբ նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեանի, սակայն այս ճամբան արժանապատուօրէն անցնելու համար, ըստ մեզի անհրաժեշտ է նաեւ հայկական մտաւոր, գիտական եւ տնտեսական ողջ ներուժին ներգրաւումը:*

*Ազգային Ժողովի մեծարգոյ Նախագահ, յարգելի հիւրեր, այո՛, ճակատագիրը՝ հայո՛ւ ճակատագի-*

*Շար.ը էջ 19*

# ՄԵԾ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ ՆԱԽԱՍԵՄԻՆ

## ՏԻԿ. ԱՆԻ ԵՓՐԵՄԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՕԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ



Յարգելի Նախագահութիւն, Տիկնայք եւ Պարոնայք, հիւրեր, Հայաստան-Սփիւռք Հինգերորդ Համաժողովի շրջանակներուն մէջ տեղի ունեցող Լրագրողներու Համահայկական եօթերորդ համաժողովը, Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցէն առաջ, իր տեսակին մէջ հաւանաբար վերջին նշանակալի հանդիպումն է, ուր աշխարհասփիւռ հայութեան զանգուածային լրատուութեան գրեթէ բոլոր միջոցները միասին, մէկ յարկի տակ, պատեհ առիթը ունին բաժնելու իրենց մտահոգութիւններն ու տեսակէտները, փոխադարձաբար հարստացնելով եւ ամբողջացնելով զիրար:

Առանց բացառութեան, հոս բոլոր հաւաքուածներուս մտահոգութիւնը մէկ է եւ այդ մտահոգութիւնը չի ճանչնար կուսակցական, յարանուանական եւ ընկերային սահմաններ: Մեր սպասած քաղաքական յաղթանակներուն տէրը, ինչպէս եւ վերջին յաղթական պատերազմին՝ ժողովուրդն է անշուշտ, եւ այս մասին երկրորդ կարծիք չի կրնար ըլլալ: Հնարաւոր սայթաքումներու կամ վրիպումներու պատասխանատուները, սակայն, մենք ու միայն մե՛նք պիտի ըլլանք, որովհետեւ այսօր մեզի՛ տրուած է աշխարհասփիւռ հայութեան տասը միլիոն հաշուող լսարանին, մեր արդար դատ ու պահանջքին համակիր ու բարեկամ ժողովուրդներուն պատմական ճշմարտութիւնները 21-րդ դարու լրատուութեան պահանջներուն յարիր արհեստավարժութեամբ եւ ճի՛շդ ժամանակին մատուցելու պատիւն ու դժուար առաքելութիւնը:

Այստեղ մեր նուաճումները իսկապէս շատ են: Շատ են թէկուզ այն պարզ պատճառով, որ մեզի հետ է, այս պարագային նաեւ մեր զօրեղ դաշնակիցն է պատմական արդարութիւնը, որ ճիշդ է, երբեմն հիւանդ կ'ըլլայ, երբեմն տկար, սակայն չի մեռնիր բնաւ: Տեղեկատուութեան այժմու արագութեան եւ մատչելիութեան պայմաններուն մէջ Թուրքերուն համար իսկ հետզհետէ աւելի ու աւելի դժուար կը դառնայ պատմական փաստերը կամայականօրէն աղաւաղելու, խեղաթիւրելու ստոր գործընթացը: Սխալած չենք ըլլար, եթէ ըսենք, թէ անոնք նոյնքան եւ աւելի յամառօրէն կը շարունակեն ապակողմնորոշել համաշխարհային հանրութիւնը, սակայն անոնց հաւատացողներուն, ինչպէս նաեւ կրաւորական կեցուածք ընդունողներուն թիւը երթալով կը նուազի:

Ահա հոս, ա՛յս ոլորտին մէջ է, որ մեր պարտաւորութիւնները շատ մեծ են:

Անշուշտ, մենք չէ, որ սկսած ենք տեղեկատուական պատերազմը, սակայն, ինչպէս ռազմի դաշտին վրայ՝ հոս եւս պարտադրուած պատերազմէն խուսափիլը անկանխատեսելի վտանգներու առջեւ կրնայ կանգնեցնել մեզ: Այսօրուան համաժողովին քննարկելի չորս հարցերը փոխադարձաբար եւ բազմաթիւ թելերով կապուած են իրարու եւ անոնցմէ որեւէ մէկուն մէջ դոյզն թերացումն իսկ, բնականաբար, պիտի ազդէ նաեւ մի՛ւս հարցերուն լուծման վրայ:

### Ա. Մամուլի մէջ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրութեան գործընթացին լուսաբանումը

Դժուար թէ այս դահլիճին մէջ ըլլայ մէկը, որ մամուլի էջերուն մէջ հանդիպած չըլլայ Ցեղասպանութեան պէս զգայուն եւ մեզի՝ լրատուական դաշտի ներկայացուցիչներուս համար չափազանց պատասխանատու թեմայով, մեղմ ըսենք, ո՛չ լիարժէք հրապարակումներու, որոնք գրուած են կիսատ-պռատ եւ աղաւաղուած հայերէնով եւ լի են տարատեսակ ու Մեծ Ողբերգութեան անյարիր նենդումներով:

Այս հարցին մէջ աւելի քան վճռական պէտք է ըլլալ եւ նուազագոյնի իջեցնել նմանօրինակ հրապարակումները, եթէ, անշուշտ, իսպառ վերացնել կարելի չէ: Այս բնագաւառին մէջ չափէն աւելի կարեւոր է հաշուեկշռուած, տրամաբանական ու ծրագրային մօտեցումը: Անթոյլատրելի է վիշտը չփոթել լալկանութեան, արդար վրիժառութիւնը՝ ահաբեկչութեան եւ անբեկանելի պահանջատիրութիւնը՝ դիւանագիտական խաղի հետ:

Անգնահատելի է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ Պահանջատիրութեան լուսաբանման մէջ օտարալեզու հայ մամուլին դերն ու նշանակութիւնը: Ծրագրուած եւ նպատակասլաց մօտեցումը շատ կարեւոր է: Չէ՞ որ մեզմէ շատեր այսօր դժուարութեամբ կրնան նշել բոլոր այն երկիրներուն անունները, որոնք արհամարելով քաղաքական ու դիւանագիտական բազմաթիւ արհեստական արգելքներ, ընդունած են արիւնալի ոճրագործութեան փաստը՝ անկէ բխող բոլոր հետեւանքներով: Մենք մեր ընթերցողներուն պարբերաբար պարտաւոր ենք յիշեցնել այդ երկիրներուն մասին՝ նաեւ լուսաբանելով քաղաքական ա՛յն իրավիճակները, որոնց առկայութեան պարագայի՛ն է, որ ընդունուած են պատմական այդ որոշումները: Լիբանանեան «Արարատ» օրաթերթը շուտով երախտագիտութեամբ, առանձին յօդուածաշարքով, պարբերաբար եւ հետեւողականօրէն պիտի անդրադառնայ այդ հարցերու լուսաբանման:

### Բ. Հայոց լեզուի իմացութեան եւ պահպանութեան հիմնախնդիրները

Հարցը շատ անկեղծ ու դիպուկ դրուած է, ուրեմն նաեւ նոյնքան անկեղծ պատասխան կ'ակնկալէ: Ճիշդ ձեւակերպում է. Նախ խօսինք լեզուի իմացութեան եւ յետոյ միայն պահպանման մասին: Գաղտնիք չէ, որ աշխարհը գրաւած համացանցային սարդոստայնը, օտարալեզու հազարաւոր կայքէջերը եւ բջիջային հեռաձայններուն օտարալեզու համակարգերը անասելիօրէն դժուարացուցած են մեր դպրոցներուն մէջ անաղարտ հայերէնի ուսուցումը:

Մարդկութիւնը զարգացման նոր փուլ մտած է եւ այսօր միայն իրենց մասնագիտութեան անմնացորդ նուիրուած ուսուցիչներու եռանդին եւ չէշտուած հայրենասիրութեան վրայ յենելով՝ դրական տեղաշարժը ոչ թէ դժուար, այլ չվախնանք ըսելու՝ անկարելի է: Նոյնիսկ ուսուցիչներուն որակաւորումը բարձրացնող համալսարաններուն անթերի աշխատանքի պարագային, հայոց լեզուի եւ հայ ժողովուրդի պատմութեան դասաւանդման աշխատանքները հազիւ թէ լուրջ յառաջընթաց ունենան: Հարցերը կը բարդացնէ նաեւ այն հանգամանքը, որ աշխարհասփիւռ հայ մանուկները տարբեր երկիրներու մէջ կ'ապրին, հետեւաբար տարբեր եւ յաճախ հակասական են ոչ միայն որդեգրուած կրթական համակարգերը, այլ նաեւ օտարալեզու դպրոցներու նկատմամբ մօտեցումները:

Ամբողջութեամբ անկեղծ ըլլալու համար ըսենք, որ լեզուի իմացութեան եւ պահպանման հիմնախնդիրները առաւելաբար պետական եւ նեղ մասնագիտական համակարգուած մօտեցում կը պահանջեն: Անշուշտ տեղեկատուական դաշտը այս բնագաւառին մէջ ալ իր գործունէութեան լայն շրջանակը ունի:

«Արարատ» օրաթերթը օրինակ, այս տարեսկիզբին կազմակերպեց լրագրական դասընթացքներ, ուր հետեւողական կերպով իրենց մասնակցութիւնը բերին երկրորդական բաժնի աշակերտներ: «Արարատ» օրաթերթի այս դասընթացքներու ընթացքին շեշտը դրուեցաւ ոչ միայն լրագրական մասնագիտութեան այբուբենի ծանօթացման, այլ նաեւ անաղարտ հայերէնով միտքերը արտայայտելու կարողութեան: Սակայն, ասոնք եւ օրաթերթի կազմակերպած մի շարք այլ միջոցառումներ, միայն օգնական լծակ կրնան ըլլալ հիմնախնդիրներու ճիշդ եւ արդիական լուծման ճամբուն վրայ:

### Գ. Քարոզչութիւն, հակաքարոզչութիւն, տեղեկատուական եւ անվտանգութեան հիմնախնդիրներ

Քարոզչութեան մասին քիչ առաջ անդրադարձանք կարծես, ուրեմն գանք հակաքարոզչութեան, որը մենք ուզենք, թէ ոչ, տեղեկատուական պատերազմի բաղկացուցիչ մասերէն է: Նախայարձակ չենք եղած բնաւ: Չենք եղած ո՛չ ռազմի, ո՛չ ալ տեղեկատուական պատերազմներու ընթացքին: Ինչ կրնանք ընել, այդպիսին է մեր հոգեկերտուածքը, այդպիսին է մեր պատմութինը, սակայն այդպիսին չէ համաշխարհայի՛ն պատմութիւնը, եւ ցաւօք այդպիսին չեն նաեւ մեր կարգ մը դրացիներուն դիրքորոշումները, որոնք սուտն ու կեղծիքը եւ միջնադարեան ցեղային վայրի նկրտումները վերածած են ազգային ռազմավարական հայեցակարգի:

Հակառակ մեր տպագիր մամուլին պատկառելի տարիքին ու անցած բեղմնաւոր ճամբուն՝ մեր իրականութեան համար հակաքա-

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES
New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.



# Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովը Հռչակագիր է ընդունել

Երեւանում այսօր աւարտուած Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովը Հռչակագիր է ընդունել:

Ինչպէս տեղեկացնում են ՀՀ Սփիւռքի նախարարութիւնից՝ Հռչակագրում նշուած է.

«Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովը, որը կայացաւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաշեմին, վերստին հաստատեց, որ Հայաստան-Արցախ-Սփիւռք գործակցութեան յետագայ ընդլայնումն ու զարգացումը նպաստում է համազգային առաջնահերթութիւնների յստակեցման եւ իրականացման գործընթացին, հայ ժողովրդի անվտանգ գոյատեւմանը, ազգային շահերի ու նպատակների շուրջ հայութեան համախմբմանը:

Ողջ հայութիւնն իր միասնական ջանքերը պէտք է նպատակաուղղի.

Հայաստանի Հանրապետութեան առաւել զօրացմանը, յետագայ առաջընթացին եւ ապահովութեանը,

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի եւ միջազգային իրաւունքի հիման վրայ լուծմանը,

Սփիւռքի առաւել կազմակերպմանը,

Ազգային ինքնութեան պահպանմանը եւ աշխարհասփիւռ հայութեան ներուժի համախմբմանը,

Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը, դատապարտմանը եւ հետեւանքների վերացմանը,

Հայ եկեղեցու շուրջ հայութեան համախմբմանը,

Արտակարգ իրավիճակներում յայտնուած հայերի օգնութեանն ու աջակցութեանը:

Մենք՝ համաժողովի մասնակիցներս,

Նկատի ունենալով աշխարհաքաղաքական զարգացումներն ու տարածաշրջանի մարտահրաւէրները, հռչակում ենք՝

1. Հետեւեալ համազգային առաջնահերթութիւնները՝ որպէս Հայաստան-Սփիւռք գործակցութեան գաղափարական հենք.

1.1 Հզօր եւ ապահով Հայաստանի կառուցում

Մենք հաստատում ենք, որ միասնական ջանքերով շարունակելու ենք կառուցել ապահով Հայաստան՝ առաւել անվտանգ եւ հզօր դարձնելով այն:

Հայաստանը համայն հայութեան Հայրենիքն է, եւ Հայաստանի առջեւ ծառացած խնդիրների լուծումը, համահայկական ծրագրերի իրականացումը հնարաւոր են միայն հայութեան մտաւոր, նիւթական եւ կազմակերպչական կարողութիւնների ու հնարաւորութիւնների մէկտեղմամբ, քանզի Հայրենիքի զարգացման, անվտանգութեան համար պատասխանատուութիւն կրում է ամէն մի հայ՝ անկախ բնակութեան վայրից:

Հայաստանում աղքատութեան եւ արտագաղթի մակարդակի կրճատման կարեւոր ճանապարհը պետական-վարչական, ընկերային եւ տնտեսական /գիւղատնտեսութիւն, զբօսաշրջութիւն, առեւտուր, սպասարկում, տեղեկատուական տեխնոլոգիաներ, սննդարդիւնաբերութիւն, էզոլոգիա, հանքարդիւնաբերութիւն, էներգետիկա, քաղաքաշինութիւն եւ այլն/ բնագաւառներում իրականացուող բարեփոխումների շարունակականութիւնն է, գործարար միջավայրի բարելաւումը, ներդրումների ծաւալների աւելացումը, աշխատատեղերի ստեղծումը, աւելի մեծ թուով սփիւռքահայերի ներգրաւումը տնտեսութեան մէջ եւ նրանց շահ ստանալու համար պայմանների ապահովումը:

Մեր միասնութեան գերխնդիրը պէտք է լինի ապագայ սերունդներին թողնել զարգացած եւ ժողովրդավարական, հզօր եւ ապահով Հայաստան:

1.2. Անկախ եւ անվտանգ Արցախ

Մենք հպարտ ենք Արցախում ապրող մեր ժողովրդի խիզախութեամբ եւ տոկունութեամբ:

Համաժողովրդական ազատագրական պայքարի շնորհիւ Արցախի ժողովուրդը 23 տարի շարունակ կառուցում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը՝ հիմնուած միջազգային իրաւունքի նորմերի եւ ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի վրայ:

ԼՂՀ ընկերային-տնտեսական խնդիրների լուծումը իրականացուել եւ իրականացւում է նաեւ սփիւռքահայութեան նպատակային աջակցութեան շնորհիւ:

Մենք միասնաբար պայքարելու ենք՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը քաղաքական-դիւանագիտական հարթութեան վրայ լուծելու համար եւ սատարում ենք Մինսկի խմբի համանախագահների գործադրած ջանքերին ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորման ուղղութեամբ միջազգային իրաւունքի՝ ժողովուրդների իրաւահաւասարութեան եւ ինքնորոշման սկզբունքի հիման վրայ:

Ողջ հայութիւնը հնարաւոր բոլոր միջոցներով պայքարելու է Ատրպէյճանի ապակառուցողական քաղաքականութեան, ուժի կիրառման սպառնալիքի ամէնօրեայ դրսեւորումների, հայկական սահմանների նկատմամբ ոտնձգութիւնների եւ ռազմատենչ կեցուածքի դէմ:

Մենք մեր երախտագիտութիւնն ենք յայտնում տարբեր երկրների նահանգային, քաղաքային իշխանութիւններին, որոնք ճանաչել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը, ինչը վկայում է այդ իշխանութիւնների եւ ժողովուրդների արդար դիրքորոշման եւ բարի կամքի, ինչպէս նաեւ տեղերում հայկական կառոյցների նպատակային աշխատանքի մասին, որը պէտք է ընդլայնուի եւ շարունակական դառնայ:

Մենք եւս մէկ անգամ վերահաստատում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը մեր պատմական Հայրենիքի մասն է, եւ նրա ճակատագիրը բախտորոշ նշանակութիւն ունի ողջ հայ ժողովրդի համար, ուստի մեր պայքարը կը շարունակուի մինչեւ ղարաբաղեան հիմնախնդրի արդարացի եւ վերջնական կարգաւորումը:

1.3. Կազմակերպուած Սփիւռք

Մենք՝ համայն հայութեան ներկայացուցիչներս, հաստատում ենք, որ հայ ժողովրդի եւ Հայաստանի պատմական զարգացման ներկայ հանգրուանին Սփիւռքը կարեւորագոյն գործօն է թէ՛ հայ դատի պայքարին աւելի մեծ թափ հաղորդելու, թէ՛ Հայաստանի Հանրապետութեան եւ ԼՂՀ-ի համար կենսական նշանակութիւն ունեցող խնդիրների լուծմանը Սփիւռքի համակարգուած մասնակցութեան ապահովման համար:

Սփիւռքի կառոյցներն ու կազմակերպութիւններն ազգային եւ համաշխարհային մարտահրաւէրների հաշուառմամբ պէտք է վերատեսութեան ենթարկեն իրենց ծրագրերը, առաւել մեծ թուով հայեր, նորեկներ ներգրաւեն կառոյցների աշխատանքներում:

Հայկական կառոյցները Հայաստանի Հանրապետութեան, ԼՂՀ-ի պետական եւ ոչ պետական հաստատութիւնների հետ միասին ծրագրաւորուած պէտք է՝

Առաջադրեն նոր մօտեցումներ՝ վերանայելու Հայաստան- Սփիւռք ռազմավարութիւնը, իրենց ջանքերը նպատակաուղղեն Սփիւռքի ուծացմանը դիմակայելու, լեզուամշակութային կորստի կանխմանը եւ Սփիւռքի նոր սերնդի մէջ հայկական ինքնութեան պահպանմանը, յատուկ հոգածութեան արժանացնեն այն համայնքներին, որոնք դեռեւս ամբողջովին կազմակերպուած չեն, օժանդակեն հայկական համայքների, համայնքային կառոյցների շուրջ հայութեան համախմբմանը:

Սփիւռքը, սփիւռքեան կազմակերպութիւնները մի իւրօրինակ կամուրջ են Հայաստանի եւ միջազգային հանրութեան միջեւ, ուստի եւ առաւելագոյնս պէտք է նպաստեն ժողովուրդների եւ քաղաքակրթութիւնների երկխօսութեանը, խորացնեն եւ զարգացնեն Հայաստան-Սփիւռք, Սփիւռքի տարբեր հատուածների միջեւ գործակցութիւնը, ինչպէս նաեւ ամրապնդեն տարբեր ժողովուրդներին պատկանող սփիւռքների հետ բարեկամական կապերը:

1.4. Հայոց լեզուն՝ որպէս հայապահպանութեան կռուան

Մենք յանձնառու ենք՝ մայրենի լեզուն իր արեւելահայ եւ արեւմտահայ ճիւղերով՝ որպէս մեր լինելիութեան եւ գոյութեան գլխաւոր յենասիւներից մէկը, անաղարտ պահելու, իրապաշտ եւ տրամաբանական մօտեցումով մերձեցնելու, զարգացնելու եւ փոխանցելու սերունդներին:

Սփիւռքում հայապահպանութիւնը Հայաստանի Հանրապետութեան կենսական հիմնախնդիրներից է, որին տարբեր ձեւաչափերով օժանդակում է պետութիւնը՝ գործակցելով համահայկական կառոյցների, հայկական կազմակերպութիւնների հետ, անընդհատ կատարելագործելով եւ զարգացնելով գործակցութեան կառուցակարգերը:

Մեր ամենօրեայ հոգածութեան առարկան պէտք է դառնան հայկական դպրոցներն ու մշակութային օճախները, մեր պատմական ժառանգութեան պահպանումը, հայ մտքի ստեղծագործ զարգացումը:

Մեր ջանքերը պէտք է նպատակաուղղենք հայ ընտանիքի ամրապնդմանը, աւանդոյթների եւ սովորոյթների, հայկական անունների եւ ազգանունների պահպանմանը, հայ ընտանիքում, հայկական միջավայրում հայերէնի գործածութեան ապահովմանը:

Մեր գլխաւոր մտահոգութիւններից մէկն էլ այն պէտք է դառնայ, որ հայ երիտասարդը, Հայրենիքի վերացական գաղափարից բացի, կարողանայ իրականում ճանաչել իր Մայր Հայրենիքը:

Մենք յստակ գիտակցում ենք, որ Հայոց լեզուն եւ հայ ազգային ինքնագիտակցութիւնը մեր ժողովրդի յաւերժութեան անհրաժեշտ պայմաններն են, եւ դրանց պահպանումը Հայոց պետութեան եւ սփիւռքեան կառոյցների գերխնդիրն է:

1.5. Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը

Շար.ը էջ 18



# Հայաստանի Անկախութեան 23-րդ Տարեդարձի Նուիրուած Փառատօն

*Շարունակուած էջ 1-էն*

ու Արցախեան գորգերուն, տախտակի վրայ քանդակուած եկեղեցիներուն, խաչքարերուն եւ այլ հայկական քանդակագործութիւններուն, որոնք գնահատանքի արժանացած են այլ ազգերու կողմէ:

Փառատօնը այցելեցին եւ ելոյթներ ունեցան շարք մը Հայ եւ ամերիկացի քաղաքական դէմքեր: Անոնց շարքին էին Կլէնտէլի Քաղաքապետական Խորհուրդի անդամներ՝ Լորա Ֆրիտմըն, Արա Նաճարեան եւ Զոլա Տիվայն: Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ Միչ Օ'Ֆարրըլ, Ուէսթ Հոլիվուտի քաղաքապետական Խորհուրդի անդամ Ճէֆֆրի Փրէնկ, Կլէնտէլի Ուսումնական Խորհուրդի անդամ Տոկտ. Արմինէ Կարապետեան, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ՝ գոնկրէսական Ատամ Շիֆի, Քալիֆորնիոյ նահանգային Խորհրդարանի անդամ Մայք Կաթոյի եւ Լոս Անճելըս գաւառի վերահսկիչ Մայք Անոթնովիչի կողմէ:





Բոլոր ելոյթ ունեցողները անդրադարձան հայ համայնքի ներդրումին՝ Ամերիկայի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքէն ներս, կամրջելով ու նպաստելով Հայ եւ Ամերիկեան բարեկամութեան ամրապնդման եւ համագործակցութեան գործընթացին:



Յարութիւն Տէրվիշօղլեանի հաղորդավարութեամբ գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ մեր մշակոյթին մաս կազմող, երգ ու պարով: Երգիչներ Արմէն Տաքէսեանի, Արմէն Ալոյեանի, Սագօ Կարապետեանի, Յարութ Յակոբեանի, Ալֆրէտ Գալստեանի, Արմէն Յովհաննէսեանի, Սալբի Մալեանի կատարողութեամբ ու Աշոտ Սարգսեանի երաժշտութեան դասաւորումով, պարային ճոխ ու հաճելի մթնոլորտ մը տիրեց ներկաներու միջեւ որոնք միասնութեան շուրջ պարով ուխտեցին հաւատարիմ մնալ ազատ անկախ հայրենիքին՝ Հայաստանին:

Ազգագրական գեղեցիկ պարերով յայտագրին մաս կազմեց ԼԻԼԵԱ պարախումբը՝ պարուսոյց Լիլեա Մարգարեանի ղեկավարութեամբ, որմէ ետք ելոյթ ունեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը, ղեկավարութեամբ պարուսոյց Վարդուհի Մինասեանի: Այս զոյգ պարախումբերու պարման-պարմանուհիները հիանալի կատարողութեամբ ու հայաբոյր պարերով փայլք տուին օրուայ տօնակատարութեան:

Փառատօնին հիւրաբար ներկայ եղաւ նաեւ Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գերաշնորհ Վաչէ Արք. Յովսէփեան: Ան իր օրհնութեան խօսքին մէջ հիացմունք յայտնելով մանուկներու պարային համաչափութեան, նազանքին ու կատարողութեան շնորհակալութիւն յայտնեց անոնց գիտակից ծնողներուն որոնք գոհողութեան գնով ու ազգային շունչով իրենց մանուկներուն կը մղեն հայապահպանման ուղիին: Սրբազան հայրը շնորհաւորեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան ողջ կազմը, որոնք ազգային գիտակցութեամբ, անխոնջ աշխատանքով ու անկոտրում կամքով կը գործեն ազգապահպանման ու հայապահպանման սուրբ նպատակին համար:










Փառատօնի աւարտին, ներկաները հեռացան բարձր տրամադրութեամբ վերանորոգելով ուխտը հաւատարիմ մնալու 23-ԱՄԵԱՅ ԱԶԱՏ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

# Massis Weekly

Volume 34, No. 35 Saturday, September 27, 2014

## 5th Armenia-Diaspora Conference Held in Yerevan

YEREVAN — The 5th Armenia-Diaspora Conference was held at the Alexander Spendiaryan National Academic Theater of Opera and Ballet on September 19 and 20. The conference is organized by the RA Ministry of Diaspora.

The event has brought together more than 1,000 representatives, including 741 leaders and representatives of Armenian structures and organizations from nearly 60 countries around the world, a 20-member delegation from Artsakh, as well as 310 state, political, cultural figures, scientists and journalists from the Republic of Armenia. There are many Armenian participants from Russia (129 participants), Syria (103 participants), Lebanon (74 participants), USA (77 participants), Georgia (45 participants), France (31 participants), Iran (25 participants) and Canada (22 participants). There are also delegates from distant countries, including Australia (15 delegates), Argentina (11 delegates), Chile (3 delegates) and the South African Republic (1 delegate).

The plenary session began with opening remarks by RA Prime Minister Hovik Abrahamyan, who particularly mentioned: "It's a great pleasure for me to welcome you in this warm atmosphere. The conference serves as an opportunity for us to appreciate the power of the Armenia-Artsakh-Diaspora triumvirate in Armenia. We are strong when we stand united as one. Armenia is strong with its two "wings"-the two Armenian States and the Diaspora. All Armenians share the same interests."

In his welcoming remarks, President of the Nagorno-Karabakh Republic Bako Sahakyan mentioned the following: "The holding of the 5th Armenia-Diaspora Conference goes to show that it has already become a traditional event. We must do everything possible to make sure the Armenia-Artsakh-Diaspora triumvirate remains strong and helps strengthen our two countries. Our coordinated efforts, the high level of readiness of Armenian soldiers and our will during the tension on the border between Karabakh and Azerbaijan in the summer made the opponent fail."

His Holiness Karekin II, Catholicos of All Armenians brought his blessing to the participants of the conference from the Mother See of Holy Etchmiadzin and mentioned that all the previous conferences have also been successful in terms of the strengthening of bonds between the Homeland and the Diaspora.

The Catholicos attached importance to the growth of Armenian families ahead of the Centennial of the Armenian Genocide. The Catholicos also mentioned that since the very first days of the Syrian crisis, the Church and the State have taken all measures to raise the issue at the international level so that the displaced people, par-

Continued on page 4

## ISIS Destroys Memorial Church of Armenian Genocide



Fighters from the Islamic State (ISIS) reportedly desecrated and blew up the Armenian Genocide memorial complex in the eastern Syrian city of Deir ez-Zor, near the site where vast numbers of Armenian refugees were forced to march to their deaths in the early 20th century.

The Church, located in al-Rashidyeh neighborhood, was built in 1989-1990, and consecrated a year later.

The Armenian Genocide Memorial Church contains the remains of victims of the Armenian Genocide collected from the Syrian desert and has served as a pilgrimage site for Armenians worldwide, and every year, on April 24, special commemoration ceremonies attended by thousands of people would be held at the site.

Armenian Foreign Minister Edward Nalbandian has strongly condemned the destruction of the church.

In a statement released today he called on the international community to combat the Islamic State, which, he described as "a threat to the civilized mankind."

'This hideous crime against a shrine once again demonstrates the brutal nature of the so-called Islamic State terrorist group. The interna-

Continued on page 4

## Armenian Independence Day Festival Draws Thousands



GLENDALE, CA – In celebration of the 23rd anniversary of the independence of the Republic of Armenia, the Nor Serount Cultural Association's annual Armenian Independence Day Festival on September 21 drew hundreds of attendees to Glendale's Verdugo Park.

Onlookers cheered for the vibrant Nor Serount dance ensembles of young children and musical guest performers delighted dancers of all ages with traditional folk dance music and patriotic songs. The joyful mood originated by the Master of Ceremonies Mrs. Ani Marselian who not only entertained the crowd but also highlighted the significance of Independence. Educational and cultural booths adorned the park featuring authentic Armenian cuisine, souvenirs, hand-woven rugs, tapestries, books and media.

Among dignitaries present for the joyous occasion were His Eminence Archbishop Vatche Hovsepian of the Western Diocese of the Armenian Church of North America who stated the importance of the independence of Armenia from Soviet rule in the 1990's, and praised the Nor Serount Cultural Association for providing such a great event to the Armenian American community where all age groups come together to have fun, preserve their culture and maintain their bond to their ancestral homeland.

The Armenian Council of America began the program by introducing Councilmember Laura Friedman and Ara Najarian, followed by State Board of Equalization Member Betty Yee, State Superintendent of Public Instruction Tom Torlakson and LA Community College Board Trustee Scott Svonkin. Others in attendance included, Glendale City Councilmember Paula Devine, LA City Councilmember Mitch O'Farrell, West Hollywood Councilmember Jeffrey Prang, Glendale Unified School District Board Member Dr. Armina Gharpetian, former Assemblymember Anthoni Portantino and representatives from the office of Congressman Adam Schiff, Assemblyman Mike Gatto and County Supervisor Michael Antonovich.

All of the elected officials praised the Armenian-American community for their efforts in continuing to persevere as nation of survivors and fighters for justice, as they presented beautiful proclamations commemorating the grand event.

"For the past 16 years we have been bringing this festival to the Armeinan-American community, drawing large groups of people from all over Southern California, said Armenian Independence Day Festival organizer Mr. Mehran Khatchadorian. "Our festival brings together young and old generations of Armenians as well as non-Armenians. Our goal is to not only promote the Armenian culture and identity for future generations of Armenians, but to also educate our non-Armenian neighbors and friends. We look forward to continuing this great endeavor for many decades to come."

**Festival photos on page 3**

# Pope Francis Accepts Invitation to Visit Armenia in 2015

VATICAN CITY — At a meeting at the Holy See Armenian President Serzh Sarkisian and His Holiness Pope Francis hailed the high-level relations between Armenia and Vatican, emphasizing that those relations built on a solid basis stem from the same Christian value system and ideology.

The interlocutors attached importance to the high-level reciprocal visits over the past years, which testify to the willingness to keep the bilateral relations in the focus.

Serzh Sarkisian and Pope Francis exchanged views on the close cooperation between the Holy See and the Mother See of Holy Etchmiadzin.

During the meeting President Sarkisian extended an official invitation to Pope Francis to visit Armenia in 2015, which the Pontiff readily accepted, expressing his sincere desire to visit the country, according to the President's office.

Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin, His Grace Bishop



Arshak Khachatrian told reporters on Wednesday that Pope Francis will visit Armenia in March of 2015, He said it's going to be both a state and religious visit. A prayer in memory of the Armenian genocide victims will be held at the Mother See within the framework of the visit.

# President Obama Praises Strong Ties with Armenia

WASHINGTON, DC — U.S. President Barack Obama has described U.S.-Armenian relations as "strong" and pledged to deepen them in the future.

"The American people join me in sending best wishes as you commemorate the 23rd anniversary of Armenia's independence on September 21.

Armenia and the United States have a strong history rooted in partnership and friendship. The people-to-people, cultural and economic ties that bind our countries are impressive and inspiring. We recognize and honor Armenia's rich cultural heritage and the many contributions Americans of Armenian descent have made to the United States over the years. The U.S.-Armenia relationship remains strong, and we look forward to continuing and deepening our cooperation for many years to come." Obama said in a weekend letter to President Serzh Sarkisian that congratulated him on Armenia's Independence Day.

"The deep bonds between the United States and Armenia are strong," U.S. Secretary of State John Kerry said for his part. "We will continue to strengthen our partnership with Armenia in various dimensions including security cooperation, economic and democratic development, and expanding people-to-people exchanges."

# Kuwait Ready to Finance Syrian District In Armenia




YEREVAN (RFE/RL) — The government of Kuwait on Thursday reportedly expressed readiness to finance the construction of a special residential district for ethnic Armenians from Syria who have taken refuge in Armenia.

The Armenian government's press office quoted Faysal Fahd al-Shayi, the head of a Kuwaiti parliamentary delegation visiting Yerevan, as telling Prime Minister Hovik Abrahamian that "Kuwait is ready to provide assistance to work on the New Aleppo neighborhood." A statement released by the office said nothing about the possible scale of that assistance and gave no other details.

In late 2012, the Kuwaiti government allocated $100,000 worth of humanitarian aid to Syrian Armenian refugees. It took the form of grocery coupons distributed to some 1,000 such families.

Responding to a petition signed by some 600 Syrian Armenian refugees, the Armenian government pledged last year to help build the New Aleppo district in Ashtarak, a town 20 kilometers west of Yerevan. The Ashtarak municipality was quick to set aside 5 hectares of land for the future neighborhood that would consist of a dozen apartment blocks and around 100 houses.

Officials from the Diaspora Ministry in Yerevan dealing with the project said at the time that roughly 500 Syrian Armenians will be able to buy those homes at below-market prices covering half of the total construction costs estimated at $35 million. The ministry hoped to raise the rest of the funding from private donors in Armenia and especially its worldwide Diaspora.

Only about $200,000 has been raised to date, the reason why the project has yet to get off the drawing board. Diaspora charities based in Europe and the United States have made no contributions so far. Speaking to RFE/RL's Armenian service (Azatutyun.am) in July, Diaspora Minister Hranush Hakobian insisted that the housing project has not been cancelled despite the lack of funding.

According to government estimates, some 11,000 Syrian Armenians currently reside in their ancestral homeland. Most of them rent apartments in Yerevan. Many struggle to survive in a country that has long suffered from high unemployment and other economic problems.

www.massisweekly.com

# The European Parliament Condemns Azerbaijan, Calls for Targeted Sanctions

BRUSSELS -- On September 18th, 2014, the European Parliament with an overwhelming majority adopted a resolution condemning the persecution of human rights defenders in Azerbaijan, affirming its previous resolutions, and calling for targeted sanctions against Azerbaijani President Ilham Aliev's regime, and visa bans against some who are directly responsible for the oppression.



Azerbaijan was harshly criticized by members of the European Parliament, who stresseed the absurd reality of Azerbaijan currently holidng the rotating Presidency of the Council of Europe's Council of Ministers – an institution upholding values of Human Rights and Freedom – whereas, "in the last few years the general Human Rights climate in Azerbaijan has been deteriorating, with a major escalation of government repression, pressure and intimidation directed at NGOs, civil society activists, journalists and human rights defenders".

MEP Marie-Christine Vergiat (Confederal Group of the European United Left – Nordic Green Left, France) said, that the impunity of Azerbaijan and the Aliev regime should stop, that the EU should not be focused on oil and gas only, and that the Association Agreement with Azerbaijan should not go on. MEP Alexander Graf Lambsdorff (Group of the Alliance of Liberals and Democrats for Europe, Germany) stressed the gruesome fact of the civil society in Azerbaijan, after the continuous and brutal authoritarian regime's crackdown on fabricated and politically motivated charges. During the speeches by the MEPs, it ws mentioned, that a few months ago, Azerbaijani President Ilham Aliev from the podium of the Council of Europe had called his critics liars, and had denied any sort of criticism, while in reality, the situation in Azerbaijan has all the more deteriorated.

The European Parliament resolution "deplores the actions taken by the Azerbaijani Government to curb contacts between civil society and youth activists and intellectuals from Armenia and Azerbaijan, since these contacts are of major importance for bridging the long-standing hostility between the two countries; in this regard, recalls the important work done in this area by Leyla Yunus and her husband Arif".

Stresses that its consent to the signature of a partnership agreement with Azerbaijan will be conditional on the satisfactory reflection of the above-mentioned requirements, the release of human rights defenders, the withdrawal of legislation restricting the operations of independent civil society, and the cessation of repression and intimidation of NGOs, independent media, opposition forces, human rights defenders and youth and social network activists. Members of the European Parliament stressed, that Azerbaijan should be held accountable for its actions at home, and that a Human Rights should be an inseparable part of the foreign policy of the EU.

The resolution regrets the fact that the EU-Azerbaijan human rights dialogue has made no substantial progress as regards the human rights situation in the country; calls on the EEAS to step up this dialogue with a view to making it effective and result-oriented, and to report regularly to Parliament, and calls on the EU Council and the Member States to urge the International Olympic Committee (IOC) to call on the Azerbaijani authorities to stop the crackdown, and make it clear that it expects them, as hosts of the European Olympic Games to be held next year, to uphold the Olympic Charter's requirement to respect press freedoms;

Most importantly, the European Parliament recalls its position of 24 May 2012, and calls on the EU Council to consider the possibility of targeted sanctions against those responsible for human rights violations, should these persist.

## Armenian Independence Day Festival Draws Thousands
















# Daniel Varoujan Hejinian's "Peace of Art" at the National Gallery of Armenia



YEREVAN — On September 18, Armenian American painter Daniel Varoujan Hejinian opened his personal exhibition called "Peace of Art" (www.PeaceofArt.org) at the National Gallery of Armenia. The exhibition is part of the 5th Armenia-Diaspora Conference organized by the RA Ministry of Diaspora and is dedicated to the 23rd anniversary of Armenian Independence and to the Centennial of the Armenian Genocide.

Among the participants of the event were RA Prime Minister Hovik Abrahamyan, RA Minister of Diaspora Hranush Hakobyan, leaders and representatives of Diaspora Armenian organizations, as well as Armenia's public and political figures and artists.

The RA Minister of Diaspora drew the participants' attention to Hejinian's bronze cross-stone called "Hands of a Mother", which is dedicated to the memory of the 1.5 million martyrs of the Armenian Genocide. The cross-stone has been placed in front of the municipality of Lowell for everyone to see and has been named the "Mother Cross-Stone" since the stone symbolizes the body, that is, the "Homeland", and the bronze symbolizes the spirit, that is, the "Diaspora".

The minister stressed the fact that the love for the Homeland, women, nature and children prevails in all of the artist's paintings.



Daniel Varoujan Hejinian was born to a family of Armenians who survived the Armenian Genocide of 1915 and took shelter in Syria. Since childhood, he had heard stories of the brutal massacres and had seen it through his parents' eyes. The longing for the homeland and the desire to develop his innate talent brought young Varoujan to the Homeland.

danielvaroujanIn 1996, Hejinian raised signs commemorating the Armenia Genocide in the State of Massachusetts for the first time in the history of the Armenian Diaspora, and he has been doing so every year since 1996. He has presented the Armenian Genocide to the international community as an irrefutable historical fact and has urged to recognize and condemn the Armenian Genocide and demand reparations.

Greeting the painter and all art lovers, RA Minister of Diaspora Hranush Hakobyan mentioned: "By naming their son after great writer Daniel Varoujan, the painter's parents raised a talented artist by the name of Daniel Varoujan Hejinian, and whereas writer Daniel Varoujan portrayed the sorrow and desires of the Armenian people in his writings, painter Daniel Varoujan Hejinian did that with his brushstrokes."

Art critic Shahen Khachatryan talked about Hejinian's paintings and praised the artist's unique style and high mastery.

Sheriff of Middlesex County of the State of Massachusetts Peter Koutoujian gave his welcoming remarks and expressed gratitude to the RA Ministry of Diaspora for the invitation to participate in the opening of his fellow Armenian American's personal exhibition in the Homeland. The Armenian sheriff proudly spoke about his compatriot Daniel Varoujan Hejinian's highly artistic paintings, which are devoted to the Armenian Genocide and show the world the crime perpetrated by the Turks in the early 20th century.

In the end, painter Daniel Varoujan Hejinian expressed gratitude to the RA Ministry of Diaspora and particularly to Minister Hranush Hakobyan for turning his dream of holding a personal exhibition in the Homeland into a reality.

Hejinian also expressed gratitude to his wife and daughter for encouraging him to organize a personal exhibition and invited the participants of the event to the exhibition hall to view the paintings showcased at the exhibition.

# AMAA and Haigazian University to Honor Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq.

Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq. have been selected as their honorees by the Armenian Missionary Association of America (AMAA) and Haigazian University, at a Celebratory banquet taking place at the Beverly Hills Hotel on Saturday, November 15, 2014 paying tribute to these individuals who have had a great impact on both institutions. The program will feature celebrated lyric soprano Kallen Esperian and the evening's MC Harry Nadjarian. The event is scheduled for 6 pm.

Dr. Agbabian is recognized worldwide in the field of earthquake engineering, is Founding President Emeritus of the American University of Armenia, a former Dean of USC's School of Engineering, and a recipient of the Ellis Island Medal of Honor. Mr. Phillips has served as Vice President of the AMAA, was named the Charlotte & Elise Merdinian Armenian Evangelical School Man of the Year, and has served as a Trustee for the Ignatius Foundation.

Both honorees have served as board members of the AMAA and have, for decades, been devoted supporters of both the AMAA and Haigazian University as well as numerous sister organizations. The spouses of the guests of honor, Elizabeth Agbabian and Suzie Phillips, were founding members of the Haigazian University Women's Auxiliary of Los Angeles and the AMAA Child and Orphan Care Committee which they have championed to this day.

Greetings from the AMAA will be conveyed by its newly-installed Executive Director/CEO Zaven Khanjian and from the Haigazian University by its President, Rev. Dr. Paul Haidostian from Beirut, Lebanon. The banquet is being co-chaired by Joyce Abdulian and Ken Kevorkian.

The Armenian Missionary Association of America, based in Paramus, New Jersey, was founded in 1918 "to serve the spiritual and physical needs of Armenian people everywhere, both at home and overseas." The organization has recently opened a West Coast Office in Glendale under the leadership of Levon Filian, the West Coast Executive Director.

Haigazian University, one of the top-ranking institutions of higher learning in the Middle East, is held in high esteem for many Armenians and has yielded many productive citizens in communities worldwide.

Banquet information may be obtained from contacts Grace Kurkjian 714-773-9075, GrKurkjian@aol.com and Sandra Kalemkiarian, 626-355-4004, Sandra@womclub.com.

# 5th Armenia-Diaspora Conference Held in Yerevan

**Continued from page 1**

ticularly the Syrian-Armenians are able to return to their homes.

His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia gave his blessing to the participants of the conference, regretted to talk about emigration and the issues of Artsakh that remain unsolved and mentioned that the Diaspora also faces challenges. "The capacities of our communities are becoming insufficient compared to our needs. We don't have the right to show a circumstantial approach to issues of national concern. As we approach the Centennial of the Armenian Genocide, we don't have the right to stay indifferent toward the destroyed assets of our nation. It is every Armenian's duty to make a contribution to the sincere and righteous struggle for recognition and condemnation of the Armenian Genocide and elimination of the consequences," Catholicos Aram I of the Great House of Cilicia stated.

Patriarch-Catholicos Nerses Petros XIX of the Armenian Catholic Church gave his blessing, attached importance to recognition of the Armenian Genocide and Armenians' claims and considered the potential of Armenia, Artsakh and the Diaspora and the unity of religious organizations necessary in order to achieve the goal.

Opening remarks were also delivered by representative of the ARF-D Bureau Hrant Margaryan; Chairman of the Central Committee of the Social Democrat Hunchakian Party Hagop Dikranian; Chairman of the Central Committee of the Armenian Democratic Liberal Party (Ramgavar) Mike Kharapian.

The second plenary session included speeches on four main topics by RA Minister of Diaspora Hranush Hakobyan (Current Priorities and Future-Oriented Objectives of the Armenia-Diaspora Partnership); Director of the Armenian Genocide Museum-Institute of the National Academy of Sciences of Armenia, secretary for the State Commission in charge of Coordinating the Events Dedicated to the 100th Anniversary of the Armenian Genocide Hayk Demoyan (On the Organizing of Events Dedicated to the Centennial of the Armenian Genocide); Head of the Task Force in charge of Coordinating Activities with Syrian-Armenians, Chief of Staff of the RA Ministry of Diaspora Firdus Zakaryan (On the Key Issues of Syrian-Armenian Refugees in the Republic of Armenia) and President of the Coordinating Body for Pan-Armenian Forum of Journalists (on The Role of Armenian Media in the Globalizing World).

# ISIS Destroys Memorial Church

**Continued from page 1**

tional community should immediately stop and uproot this plague threatening the civilized world, cut off the routes of its supplies, funding, support and sponsorship," he said.

Since its emergence as a real force in the Middle East ISIS has committed vandalism and sacrileges in many shrines and holy sites both in Syria and in Iraq. In recent weeks the United States and its allies have stated about their commitment to confront ISIS that has been called a threat to the region and the entire world.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ 15ՐԴ ԴՐԱՄԱՀԱՒԱՔԸ ԱՆՑԱՒ $200 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԻՑ



Կիրակի, Սեպտեմբեր 21ին կէսօրից յետոյ ժամի 3ից մինչեւ 12ը կայացաւ «Հայաստանի կարիքաւոր եւ ծնողազուրկ երեխաների օգնութեան ֆոնդի» 15րդ տարեկան թելեթոնը, որի կենտրոնը Կլենտէյլի Իրանահայ Միութեան կենտրոնն էր, որտեղից ամբողջ արարողութիւնը սփռեց տեղիս հայկական 4 հեռուստակայաններից:

Ձեռնարկի բացումը կատարեց Թեմիս նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան: Ապա հաղորդուեց Թեմակալ Առաջնորդների Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի պատգամները, ինչպէս նաեւ հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Գերապայծառ Տ. Միքայէլ Եպս. Մուրատեանի Աւետարանական համայնքի ժողովրդապետ՝ Վերապատուելի Ճօ Մաթոսեանի ողջոյնի խօսքերը:

9 ժամեայ ծրագրին մասնակցեցին հայ եւ ամերիկացի պաշտօնական դէմքեր, իրենց ողջոյնի խօսքերով: Ելոյթ ունեցան բազում մտաւորականներ, քաղաքական, ազգային, հասարակական եւ մշակոյթի գործիչներ: Երկու տասնեակից աւելի արուեստագէտներ սքանչելի ելոյթներով փայլ տուին երեկոյին: Իրանահայ Միութիւնը իր բոլոր հնարաւոր միջոցներով օգնեց եւ օժանդակեց դրամահաւաքին: Հազարաւոր հայորդիներ մասնակցեցին թելեթոնին, որի արդիւնքում նուիրաբերած գումարը անցաւ 200,000 տոլարի սահմաններից: Դրամահաւաքը շարունակւում է: Նշելի է որ կոնգրեսական Մայք Գաթոն, իր ներկայացուցիչների միջոցով առաքել էր ֆոնդի հիմնադիր «Քաջ Նազար» հանդէսի տնօրէն եւ խմբագիր, նոյնանուն հեռուստածրագրի հաղորդավար Յովհաննէս Բալայեանին իր ողջոյնի խօսքը եւ պատուոյ գիրը:

Յիշենք նաեւ որ ծրագիր հանդիսավարն էր՝ հանրածանօթ ասմունքող եւ հաղորդավար Նունէ Աւետիսեանը, որն ամենայն հմտութեամբ ներկայացրեց ելոյթ ունեցողներին եւ արուեստագէտներին: Բազմահարիւր այցելուներ առանց ձանձրոյթի, Իրանահայ Միութեան կահաւորուած եւ ճաշակաւոր կերպով զարդարուած սրահում մի քանի ժամեր ունկնդրեցին ելոյթ ունեցողներին եւ ծափահարեցին: Հետաքրքրական էր փոքրիկ դպրոցականների ելոյթները եւ նուիրատուութիւնները, իրենց ծնողների եւ ուսուցիչների ուղեկցութեամբ: Բոլոր այցելուները հիւրասիրուեցին բազմաթիւ ուտելիքներով եւ զովացուցիչներով, որոնք նուիրաբերել էին Կլենտէյլի մի շարք հայկական ռեստորաններ: Հայաստանի անկախութեան 23րդ տարեդարձին զուգադիպած սոյն դրամահաւաքը մէկ անգամ եւս ապացուցեց որ ժողովուրդը զօրավիգ է այդ կազմակերպութեան եւ միշտ սիրալիր կերպով պատրաստ է օգնելու ի նպաստ Հայաստանին տարուող բոլոր աշխատանքներին, որոնց շարքին է պատկանում 15 տարիներից ի վեր Հայաստանի ֆոնդը, որն իր միջոցով ցարդ հիմնականօրէն վերանորոգել է Հայաստանի անտեսուած գիւղերի եւ շրջանների հինգ մանկատներ եւ դպրոցներ: Մանրամասնութիւնները յաջորդիւ:

Ն. ԲԱԼԱՅԵԱՆ

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԵՆ ԴՈԿՏ. ՄԻՀՐԱՆ ԱՂՊԱՊԵԱՆԸ ԵՒ ՊՐՆ. ՃՕՐՃ ՖԻԼԻՓՍԸ





Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը եւ Պէյրութի Հայկազեան Համալսարանը Շաբաթ, Նոյեմբեր 15-ին՝ Պէվըրլի Հիլզ պանդոկին մէջ տեղի ունենալիք շքեղ ճաշկերոյթի մը ընթացքին, պիտի պատուեն երկու յարգելի անձնաւորութիւններ՝ Դոկտ. Միհրան Աղպապեան եւ Պրն. Ճօրճ Ֆիլիփս, որոնք մեծ ներդրում ունեցած են այս զոյգ հաստատութիւններուն մէջ: Ճաշկերոյթի ընթացքին ելոյթ պիտի ունենայ հռչակաւոր երգչուհի Քալէն Էսբէրեան, իսկ հանդիսավարի պաշտօնը պիտի կատարէ Պրն. Հէրի Նաճարեան:

Դոկտ. Աղպապեան, համաշխարհային ճանաչում ունի երկրաշարժի ճարտարագիտութեան դաշտին մէջ: Ան եղած է հիմնադիր նախագահ Հայաստանի Ամերիկեան Համալսարանին, կաճառի նախկին ատենապետ Հարաւային Քալիֆորնիայի Համալսարանին (University of Southern California) եւ շքանշանակիր՝ Էլիս Այլընտի (Ellis Island) : Պրն. Ճօրճ Ֆիլիփս եղած է Հայ Աւետարանչական Ընկերակցութեան նախկին փոխ-նախագահներէն մին, ընտրուած է Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի Տարուան Պատուոյ Անձը եւ ծառայած է Իկնէշըս Հիմնարկի (Ignatius Foundation) որպէս Վարչական Խորհուրդի անդամ:

Դոկտ. Աղպապեան եւ Պրն. Ֆիլիփս եղած են ԱՀԱԸ-ի Վարչական Խորհուրդի անդամ եւ երկար տարիներ մեծ նուիրումով օժանդակած են այս զոյգ հաստատութիւններուն: Անոնց կողակիցները՝

Շար.ը էջ 15

## Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ
## ՄԵՐ ԱԶՆՈՒԱՍԻՐՏ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ

Ընդառաջելով հարիւրաւոր ստացուած հեռախօսազանգերի, որոնք քաղաքից բացակայելով կամ տարբեր պատճառներով առիթ չեն ունեցել մասնակցելու Հայաստանի Ծնողազուրկ Հաշմանդամ Երեխաների թելեթոնին, ի գիտութիւն յայտնում ենք որ Կիրակի, Սեպտեմբեր 28ին, 2014, երեկոյեան ժամը 10:00ից մինչեւ ժամը 1:00ը «Քաջ Նազար» հեռուստակայանի A.M.G.A. 380, որին կը միանայ նաեւ A.A.B.C. 384 High Wision 381 կայանները:

Այդ լրացուցիչ հաղորդումով մենք առիթը կը տանք բաւարարելու մեր ազնուահոգի հայրենակիցների պահանջին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖՈՆՏԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

HayastanInfo.net



# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԿԻԼԻԿԻԱ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆ (23 ՍԵՊՏ. - 5 ՀՈԿՏ. 2013) ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՄՈՐՄՈՔՆԵՐ

ՎԵՐ. ԽՍԱՑԻ ՍԱՐՄԱՋԵԱՆ

Հակառակ որ դեռ անցեալ տարի արդէն եւ վերջապէս, իրականացած էր մեր աննման Կիլիկիան եւ Արեւմտեան Հայաստանը այցելելու երկար տարիներու գիս յաճախ անհանգստացնող երազը, բայց երբ այս տարի ալ նորէն առիթ մը ներկայացաւ, չիտակը չկրցայ փորձութեան դէմ դնել: Նամանաւանդ անոր համար որ, երբ իմացայ թէ՝ կազմակերպողը Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան քաջածանօթ եւ մասնագէտ Արմէն Արոյեանն էր:

Արմէնը թէեւ երկու մագիստրոս տիտղոսներու տիրացած է - Ելեքտրագիտութեան եւ Առեւտրական Գիտութեան.- սակայն կարելի է անվարան եւ կատարեալ վստահութեամբ ըսել թէ, ան արժանի է նաեւ Ուխտագնացութեան (անշուշտ Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի) տոքթորայի պատուոյ ու բարձրագոյն տիտղոսին, մինչեւ իսկ անոր առաջին մրցանակին: Ահա թէ ինչու՞...

Արմէնը 1987-էն սկսեալ, հինգ տարի յաջորդաբար, կարգ մը բարեկամներու հետ այցելած էր Կիլիկիա եւ Արեւմտեան Հայաստան, որոնց ընթացքին ոչ միայն բաւական տեղեկութիւններ ունեցած եւ մեծ փորձառութիւն ձեռք ձգած էր, այլ նաեւ ինչ որ շատ աւելի կարեւոր է - տեսակ մը առաքելական եւ ազգային կոչում ստացած էր անձամբ կազմակերպելու եւ առաջնորդելու նմանօրինակ ուխտագնացութիւններ: Իր այս կոչումին փաստը շատ յստակ կերպով կը տեսնենք՝ տարիներ առաջ Թորոնթոյի մէջ իր ներկայացուցած սահիկներուն եւ առ այդ իր տուած անձնական վկայութեան մէջ:

29 Ապրիլ 1989-ին, Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցիի Ջափահաս Երիտասարդներու վարչութիւնը հրաւիրած էր Արմէնը որ տեղեկութիւններ եւ իր անձնական տպաւորութիւնները տայ 1987-ին եւ 1988-ին Կիլիկիայի եւ Արեւմտեան Հայաստանի տուած այցելութիւններուն մասին: Ձեռնարկին ներկայ էին 400 հոգի: Ձեռնարկին վերջաւորութեան Արմէնը իր ուխտագնացութիւններուն նպատակը ներկայացուց հետեւեալ խիստ յատկանշական եւ խորիմաստ խօսքերով. «որպէս տաքարիւն հայ, երթալ փնտռել իմ հայրերուս եւ հարազատներուս ծննդավայրերը, առնել հողին բոյրը, պտուղներուն համը, խմել ջուրը եւ շօշափել քարերը՝ որոնց վրայ տակաւին թաց է իմ ազգիս քրտինքը եւ արիւնը. եւ հասնիլ արմատներուն, որոնք հետզհետէ կը հեռանան աշխարհի քաղաքակիրթ երկիրներուն մէջ ապրող նոր սերունդին առօրեայէն»:

Քաջալերուած եւ մեծապէս խանդավառուած Արմէնին ներկայացուցած սահիկներէն եւ մանաւանդ հոգենորոգ խօսքերէն, Թորոնթոհայ հանրածանօթ հեղինակ, բանաստեղծ եւ որպէս վաստակաշատ թղթակից Հորիզոն շաբաթաթերթին՝ պր. Գրիգոր Հոթոյեան, հետեւեալ դիպուկ եւ խիստ պատշաճ խօսքերով արժեւորած եւ նկարագրած էր անոնց ձգած գգայացունց ազդեցութիւնը ներկաներուն վրայ.

«Ներկայ ժողովուրդը խոր յուզումով, ափսոսանքով եւ կարօտակէզ մրմունջներով հետեւեցաւ հայ ժողովուրդի բնօրրանի եւ հոգեզմայլ գեղեցկութիւններուն, հոգեւին դատապարտելով Թուրքիոյ բարբարոսութիւնները եւ ցեղասպանութեան արարքը, տէր դառնալու համար Հայոց բազմահազարամեայ հայրենիքին... իրապէս հայաբոյր եւ հայրենաբոյր երեկոյի մը ներկայ գտնուելու առիթը ունեցանք, որու համար կը շնորհաւորենք Արմենակ Արոյեանը» (Հորիզոն, 5 Յունիս, 1989):

Անշուշտ բնական էր որ, այս բոլորէն ետք, Թորոնթոյի Հայ Աւետ. Եկեղեցին նորէն հրաւիրէր Արմէնը, այս անգամ իր երրորդ ուխտագնացութեան սահիկները ցուցադրելու, 19 Նոյեմբեր 1989ին, որու ներկայ եղան աւելի քան 600 հոգի:

Ուրեմն, այս բոլորը ցոյց կու տան թէ, ալ եկած էր ժամանակը որ Արմէնը ինք անձամբ կազմակերպէ որպէս գլխաւոր եւ փորձառու առաջնորդ, ապագայի բոլոր եւ բազմաթիւ ուխտագնացութիւնները: Ահա այսպէս, 1991-էն սկսեալ մինչեւ Սեպտեմբեր 2013, Արմէնը կազմակերպած եւ առաջնորդած է 75 ուխտագնացութիւն որու մասնակցած է 1280 հոգի: Մենք ունեցանք առանձնաշնորհումը ըլլալու 74-րդ ուխտագնացութեան մասնակցողներուն բախտաւոր եւ երանելի խումբը (75-րդ խումբը ժամանեց Անգլիայէն. մեր ուխտագնացութիւնը աւարտելէն միայն մէկ օր առաջ, որոնց Արմէնը գնաց դիմաւորելու Կարս քաղաքի օդակայանը):

Հիմա այս երկար նախաբանէն ետք գանք բուն նիւթին: Մեր ուխտագնացութեան: Բայց ո՞վ ենք մենք:

Մեր խումբը կը բաղկանար միայն 12 հոգիէ, ներառեալ առաջնորդը, փոխառաջնորդը եւ ինքնաշարժին վարիչը: Խումբին փոքրաթիւ ըլլալը ունէր իր առաւելութիւնը ժամանակ շահելու , գիրար մօտէն ճանչնալու եւ ջերմօրէն հաղորդակցելու իրարու հետ:

Հիմա, աւելի քան 4200 քիլոմեթր երկարութիւն ունեցող մեր ճամբորդութիւնը, Պոլիսէն մինչեւ Անի, կը պարունակէր հետեւեալ քաղաքները եւ գաւառները-Պոլու, Քէօթահիա, Աքշէհիր, Գոնիա, Կեսարիա, Զէյթուն, Մարաշ, Մուսատաղ, Այնթէպ, Տիյարպէքիր, Խարբերդ, Մուշ, Պիթլիս, Վան, Կարս եւ Անի:

Բայց անմիջապէս պէտք է ըսել որ, այս յօդուածին նպատակը, եւ կամ յօդուածաշարքին, բոլոր քաղաքներուն պատմագրութիւնը եւ այցելած վայրերուն աշխարհագրութիւնը տալ չէ, որովհետեւ, այդ մանրամասնութիւնները կարելի պիտի ըլլար ներկայացնել միայն մեծահատոր գիրքի մը մէջ: Այլ՝ միայն քանի մը շարունակական յօդուածներու մէջ տալ անձնական խոհեր եւ հոգեկան ապրումներ, յատկապէս եւ միայն այն վայրերու մասին, որոնք անմիջականօրէն կ'արթնցնեն խիստ սրտայոյզ յուշեր եւ կը խթանեն անդիմադրելի խորհրդածութիւններ ու երեւակայութիւններ: Մտորումներ եւ մորմոքներ:

Այս պայմանները մարմնաւորող առաջին ուխտավայրը որ կ'այցելենք Չորեքշաբթի 23 Սեպտեմբերին Քէօթահիա քաղաքն էր (բնակչութիւն 220 000):

## ՔԷՕԹԱՀԻԱ

Արդեօք կա՞յ հայ մը որ Քէօթահիա անունը լսելուն պէս չի մտաբերեր Կոմիտաս վարդապետը, «մեծ երգահան ու գիտնական, մեծ երգիչ ու բանաստեղծ, նուագարար ու խմբավար», ըստ Պարոյր Սեւակի:

Կոմիտաս, աւազանի անունով Սողոմոն Սողոմոնեան. ծնած է 1869 Սեպտեմբեր 26-ին (ուր մենք հասանք իր ծննդեան 144-րդ տարեդարձէն միայն մէկ օր առաջ), զաւակը՝ Գէորգ եւ Թագուհի Սողոմոնեաններու: Ան հազիւ մէկ տարեկան՝ դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու իր մայրը, իսկ եօթը տարեկանին ալ հայրը:Բայց, իր կանխահաս որբութեան այս մեծ դժբախտութիւնը, իրականութեան մէջ, ոչինչ էր բաղդատմամբ իր գալիք ահռելի եւ քստմնելի դժբախտութիւններուն՝ աքսորի, բանտարկութեան, ծեծի եւ անօթութեան: Եւ շատ հաւանաբար իբր հետեւանք այս բոլորին, 1916-ի սկիզբները ի յայտ կու գան իր խիստ ցաւալի եւ մահացու հիւանդութիւններուն ախտանշանները, որու ամենէն ցաւալին եւ անբուժելին իր մտային խանգարումն էր: 1919-ի Ապրիլին կը տեղափոխուի Փարիզ, Վիլ-Էվրար արուարձանի հիւանդանոցը, ապա 1922-ին Վիլժուիֆ հիւանդանոցը, ուր 13 տարի կը մնայ մասնագէտ հոգեբոյժներու խնամքին տակ, բայց ափսո՛ս, ի զո՜ւր: Կը վախճանի 1935, Հոկտ. 31-ին: Իսկ 1936 Մայիսին, իր զմուռսուած աճիւնը կը փոխադրուի Հայաստան, Երեւանի հին գերեզմանատան պանթէոնին մէջ:

Փարիզ հիւանդանոցին մէջ եղած ատեն, զինք յաճախ կ'այցելէին հայ երաժիշտներ եւ երգիչներ, որոնց շարքին, իր մտերիմ բարեկամը՝ Փանոս Թերլէմէզեան, ըստ որու վկայութեան, երբ գայն վերջին անգամ ըլլալով կ'այցելեն, ան սթափելով կը շշնջայ. «Մեր դրանը խնկի ծառ, կիւլիւմ ջան» քաղցրահնչիւն երգը: Եւ երբ հողին կը յանձնեն Կոմիտասի աճիւնները, Փանոս Թերլէմէզեան արցունքով լեցուն աչքերով եւ դառնապէս հեկեկալով, ափ մը հող կը նետէ դագաղին վրայ եւ կ'ըսէ. «վերջապէս հասար մուրազիդ, քու հայրենի սուրբ հողիդ մէջ հանգչելով: Յաւիտենական հանգիստ ոսկորներուդ, անմահ Կոմիտաս» (Հայ երգի 2 հսկաներ, Սայաթ Նովա, Կոմիտաս վարդապետ. Սարգիս Ա. Քհնյ. Անդրէասեան):

Եւ երբ ես խորասուզուած էի այս տխուր եւ հոգեմաշ յուշերուն ու խորհուրդներուն մէջ, մեր ինքնաշարժը կ'ընթանար քաղաքի փողոցներուն մէջէն, մէկ կողմէն բարձր եւ գեղեցիկ շէնքերով օժտուած, իսկ միւս կողմէն ալ, հին եւ միայարկանի տուներով, որոնք ըսուեցաւ թէ եղած են հայերու բնակարաններ, թերեւս ալ, ո՞վ գիտէ, անոնցմէ մէկն ալ եղած է Կոմիտաս վարդապետի ընտանիքին՝ Սողոմոնեաններու բնակարանը: Չեմ գիտեր թէ, արդեօք որեւէ փորձ կատարուա՞ծ է անոր տեղը գտնելու: Եթէ երբեք օր մը գտնուի, հաւատացէք որ անիկա կ'ըլլայ հայկական մեծագոյն սրբավայրերէն մէկը, ուր ամէն տարի տասնեակ հազարաւոր հայեր ուխտի կ'երթան՝ աղօթելով եւ միաձայն, բարձրաձայն եւ ողբաձայն երգելու Կոմիտասի անգուգական եւ չնաշխարհիկ «Տէր Ողորմեա»ն եւ, անշուշտ եւ անպայման, երգելու երկնասլաց ու լռակեաց Կռունկը:

Կռունկ, ուստի կու գաս ծառայ եմ ձայնիդ.

Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս,

Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.

Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր,

Կռունկ, մեր աշխարհէն գընա, հեռացիր:

Եւ կռունկը նախընտրեց լուռ կենալ եւ հեռանալ, քան թէ պատմել իր չըլլալիք ու չպատմուելիք տեսածները-տասնեակ հազարաւոր անմեղ հայերու դիակները...

Ապա քիչ մը եւս յառաջանալով, տեսանք նաեւ հին եկեղեցիի մը շէնքը: Ըսուեցաւ թէ՝ անոր դուռը միշտ գոց կը մնայ: Բայց ինչու՞... հաւանաբար «Գող սիրտը դող»: Արդեօք կրնա՞յ ըլլալ որ անիկա Քէօթահիայի Վերի Սուրբ Թորոս եկեղեցին էր, ուր ժամանակին Կոմիտաս 100 հոգինոց երգչախումբի մը ղեկավարը եղած է: Աստուած գիտէ: Այս բոլորէն ետք, հիմա շատ լաւ հասկնալի է թէ Կոմիտաս ինչու՞ ըսած է «սիրտս նման է էն փլած տներ». Բայց ինչպէ՞ս չըլլար...

Եւ կամ՝ ինչու՞ խենթացած էր. «դէ եկ, Վարդապետ ու մի խենթանար» (Պ. Սեւակ):

Երեկոյ ըլլալով կ'ուղղուինք պանդոկ:

- Դէ եկ, Պատուելի, քնացիր, եթէ կրնաս, այս բոլորէն ետք:



## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՈՉ ՄԻ ԱՊԱՑՈՅՑ

*Ռ. ԿՈՐԻԻՆ*

*Մեր ծանօթ բարեկամը հրաւիրուած է եղել հարսանիքի, նա իր տպաւորութիւններն էր պատմում դժգոհանքով մէկ տեղ ասելով.*

*-Հարսանիքի էի հրաւիրուած, անշուշտ ուրախալի է եւ շնորհաւորելի, որ երիտասարդ զոյգեր իրար սիրելով ընտանիք են կազմում, Աստուծով պողպատէ սիրով ծլեն, ծաղկեն եւ զօրանան ու մէկ բարձով ծերանան: Բաւական հոծ թւով հիւրեր, շուրջ հինգ հարիւրի հասնող, որոնց ամէն մի տաս հոգին տեղ էր գրաւել տաս հոգանոց սեղանի շուրջը:*

*Ուշադիր լսելով մեր բարեկամի պատմածը հաստատեցի բնական եւ օրինաւոր լինելը աւելացնելով ասացի.*

*-Մինչեւ այստեղ ոչ մի տարօրինակութիւն է նկատւում, հրաւիրեալների թւով քիչ թէ շատ լինելը կապւում է հարսանքատիրոջ շրջապատ ունենալու հետ:*

*-Իմ դժգոհանքը շատ թւով հիւրերից չէր, առաջինը՝ հիւրասիրելու ձեւատեսակը:*

*-Միթէ անսովոր բան էք նկատել, որը ձեզ դուր չի եկել:*

*-Աւանդական սովորութիւն է, որ հիւրերը հիւրասիրւում են սեղանների շուրջը մատուցողների միջոցով, իսկ այս անգամ այլ ձեւ էր կիրառուել, հիւրերը ինքնահիւրասիրութեամբ սնունդը պիտի առնէին եւ նստէին իրենց տեղերում, տարբեր սեռի եւ տարիքի մարդոց այնպիսի խռնում էր առաջացել, որ երկար ժամանակ պէտք էր շարքում սպասել մինչեւ հապճէպ մի բան առնէիր եւ անցնէիր տեղդ: Ծերահասակների համար շատ դժուար էր երկար ոտքի վրայ կանգնել:*

*-Մի տեսակէտից քո անհանգստութիւնը տեղին է, դա կարելի է կարգաւորել սրահի պատասխանատուների կողմից հոծ թւով հրաւիրեալների դէպքում սեղաններից հերթականօրէն մի քանիսին հրաւիրել սնունդ ստանալու: Այս տեսակի կիրառումը օգնելու է նաեւ սնունդի անտեղի թափելու առաջն առնել: Աֆրիկեան եւ Ասիական որոշ երկրներում մարդիկ քաղցածութիւնից սովամահ են լինում, իսկ մենք անուշադիր շռայլ կեանք ենք վարում: Իրանում վաղուց հայկական հարսանիքներում այս մատակարարման ձեւն է գործադրւում: Այլ անհանգստացնող վերաբերմունք նկատեցի՞ր.*

*-Ամենակարեւորը հայեր էին պսակւողները, բայց հայկական մեր մշակոյթի ապացոյց չտեսայ, նրանով հանդերձ որ սրահը իր պարունակութեամբ հայեր էին, շատ-շատերը անգլերէն չիմացող: Կարօտ մնացի հայերէն խօսակցութեան՝ հարս ու փեսայ, հայրեր ու քաւոր մի բառ հայերէն չխօսեցին, ո՞ւմ համար էին անգլերէն խօսում՝ ես չհասկացայ: Բա չես ասի նուագախումբի մասին, հենց ինչ երգեցին ու նուագեցին բոլորովին մեր գողտրիկ երգերից, նուագներից ու պարեղանակներից նշոյլ չհնչեց, օտար եղանակներով էն սկզբից մինչեւ վերջ վեր-վեր թռան ու պարեցին, կարծես երաժշտական համերգի էի հրաւիրուած: Մեր որոշ հայ ընտանիքներ, ներողութիւն ոչ թէ հայ ընտանիք, այլ՝ ոչ հայ ընտանիք: Այն ընտանիքը որ իր հայկական արժէքների նկատմամբ նախանձախնդիր չէ, ոչ թէ՝ հայ ընտանիք, այլ... : Այս բոլորի ականատեսը լինել անկարելի է, ճնշումդ չբարձրանայ եւ հալալ ախորժակով մի բան ուտես:*

*-Ուրիշ ինչ ես նկատել, որ քո տրամադրութեան անկման պատճառն է դարձել, որ կորցրել ես ուտել-խմելուդ ախորժակը:*

*-Ընդհանրապէս սրահի մուտքի առջեւը հարսանքատէրերից մէկը պատւում է հիւրի ներկայութիւնը, կամ կեր ու խումի ընթացքում հարս ու փեսան մէկ-մէկ այցելում են սեղանները հիւրերին բարի գալստեան եւ շնորհակալութեան խօսքերով գնահատում ներկայութիւնը ու յուշապատկերով անմահացնում պահը, ցաւօք սրտի այս տարրական քաղաքավարութեան ոչ մէկ տարրը չկատարուեց: Դու ասա՛, այս տեսակ անտարբերութիւնը ինչպէ՞ս կը որակես, բացի այն որ՝ դու կը մտածես այլ բան...*

## ՑԵՂԱՍՊԱՆԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 12-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ԵՐԵՒԱՆՈՒՄ

*20-րդ դարի ցեղասպանութիւնների համեմատական վերլուծութիւններ*

*Ցեղասպանագէտների միջազգային ընկերակցութեան 20- րդ հանդիպում*

*8-12 Յուլիս 2015, Երեւան*

*Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը 2015 թուականի Յուլիսի 8-12-ը հիւրընկալելու է Ցեղասպանագէտների միջազգային ընկերակցութեան (ՑՄԸ ) 12- րդ համաժողովը , որի խորագիրն է «20-րդ դարի ցեղասպանութիւնների համեմատական վերլուծութիւն»:*

*Հեղինակաւոր այս համաժողովի անցկացումը Երեւանում աննախադէպ է լինելու թէ՛ մասնակիցների քանակի, թէ՛ ակադեմիական բարձր վարկանիշի եւ իհարկէ Մեծ Եղեռնի հարիւրերորդ տարելիցի տեսանկիւնից :*

*Համաժողովին իրենց մասնակցութիւնը կը բերեն ցեղասպանագիտութեան եւ յարակից ոլորտների հարիւրաւոր լաւագոյն մասնագէտներ աշխարհի տարբեր երկրներից:*

*2015 թ. Յուլիսին անցկացուելիք համաժողովը նուիրուելու է Հայոց ցեղասպանութեան 100-րդ, ինչպէս նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ Հոլոքոստի 70-րդ տարելիցներին:*

*«Այս համաժողովի անցկացումը բացառիկ իրադարձութիւն է լինելու հայագիտութեան եւ ի մասնաւորի Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան ոլորտում: Հայաստան են ժամանելու հարիւրաւոր հեղինակաւոր գիտնականներ եւ երիտասարդ մասնագէտներ, որոնց մասնակցութիւնը Ցեղասպանագէտների միջազգային ընկերակցութեան տասներկուերորդ համաժողովին լաւ առիթ է հանդիսանալու Հայոց ցեղասպանութեան եւ դրա հետեւանքների մասին աւելի խորքային պատկերացումներ ունենալու եւ ինչու չէ Հայաստանին եւ մեր մշակոյթին մօտիկից ծանօթանալու համար», - նշեց համաժողովի կազմկոմիտէի տեղական յանձնաժողովի նախագահ Հայկ Դեմոյեանը:*

*1997 թ . Ցեղասպանագէտների միջազգային ընկերակցութիւնը ճանաչել է Հայոց ցեղասպանութիւնը, իսկ 2010 թ . ստացել ՀՀ Նախագահի՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործում նշանակալի աւանդի համար շնորհուող մրցանակ:*

*Ցեղասպանագէտների միջազգային ընկերակցութիւնը (International Association of Genocide Scholars) ցեղասպանութիւնները եւ մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւններն ուսումնասիրող գիտնականների առաջատար եւ խոշորագոյն միաւորումն է: Այն ստեղծուել է 1994 թ. յայտնի ցեղասպանագէտներ Իսրայէլ Չառնիի (Israel Charny), Հելեն Ֆայնի (Helen Fein), Ռոբերտ Մելսոնի (Robert Melson) եւ Ռոջեր Սմիթի (Roger Smith) կողմից եւ այսօր միաւորում է աւելի քան 500 գիտնականի աշխարհի տարբեր երկրներից: Ընկերակցութեան նպատակն է հետազօտել եւ ուսուցանել աշխարհում տեղի ունեցած ցեղասպանութիւնների պատճառները՝ կանխարգելելու համար ցեղասպանութիւնների կրկնումն ապագայում: Հայոց ցեղասպանութիւնը մշտապէս գտնւում է Ցեղասպանագէտների միջազգային ընկերակցութեան անդամների ուսումնասիրութեան կենտրոնում:*

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

**ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ**

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

**ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ**

ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ**

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
ՊԱՏՇԱՃ ՅԱՅՏԱԳԻՐ



ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՊԸՐՊԷՆՔԻ
ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
3325 N Glenoaks Blvd., Burbank, CA 91504

**ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3-ԻՆ, 2014**
**ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30-ԻՆ**

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԻՆ ՀՈԳԵՃԱՇ
ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ



## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*Տիկին Էլիզապէթ Աղպապեան եւ Տիկին Սուզի Ֆիլիփս, եղած են Լոս Անճէլըսի Հայկազեան Համալսարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ ԱՀԱԸ-ի Մանուկներու եւ Որբերու Յանձնախումբի հիմնադիր անդամներ, ուր կը շարունակեն ծառայել մինչեւ այսօր:*

*Ճաշկերոյթի ընթացքին իրենց ողջոյնի խօսքը պիտի հաղորդեն Աւետարանչական Ընկերակցութեան նորընտիր Գործադիր Տնօրէն՝ Պրն. Զաւէն Խանճեան, ինչպէս նաեւ Հայկազեան Համալսարանի Նախագահ՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան: Ճաշկերոյթի յանձնախումբի ատենապետներն են Տիկին Ճոյս Ապտուլեան եւ Պրն. Քէն Գէորգեան:*

*Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան կեդրոնատեղին կը գտնուի Paramus, NJ: Ան հիմնուած է 1918-ին իր ծառայութիւնները մատուցանելու բոլոր անոնց՝ որոնք օգնութեան կարիքը ունին՝ Հայրենիքի եւ արտերկրի մէջ, առանց խտրութեան»: Վերջերս կազմակերպութիւնը բացաւ իր Մասնաճիւղը Glendale, CA-ի մէջ, Արեւմտեան Շրջանի Գործադիր Տնօրէն՝ Պրն. Լեւոն Ֆիլեանի առաջնորդութեան տակ:*

*Հայկազեան համալսարանը առաջնահերթ բարձրագոյն ուսման կեդրոն մըն է Միջին Արեւելքի մէջ եւ հիացումի առարկան՝ շատ մը հայերու: Անոր շրջանաւարտներէն շատեր այսօր կը ծառայեն մեր գաղութներուն մէջ որպէս պատուաւոր քաղաքացիներ եւ առաջնորդներ:*

*Ճաշկերոյթին մասին յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք կապ հաստատել Կրէյս Քիւրքճեանի (հեռ. 714.773.9075, E-mail: GrKurkjian@aol.com) կամ Սանտրա Քալէմքեարեանի (հեռ. 626.355.4004, E-mail: Sandra@womclub.com) հետ:*

# ՀԱԼԻՒՈՐԻ ԾԱՌԸ

*ՎԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ*

*Բարդին արագ չորանում էր... Բարդին դեռ անցեալ ամրանն սկսեց չորանալ: Դեռ անցեալ ամրանը, երբ անտէրութեան խորշակը բնին առաւ ու սողոսկեց մտաւ կեղեւի տակ, երբ մահուան դողը հեռահար ալիքուեց ու կատարին քսուելով անցաւ, բարդին զգաց, որ աւարտի աղէտն իր համար անակնկալ ու միանգամից է իջնելու: Եւ խխունջի պէս պատեան ներքաշուեց, իր տառապանքի մէջ կուչուձիգ ամփոփուեց ու տրուեց հոգեվարքի համր բնազդին: Երբ քառասուն տարի առաջ գիւղից քաղաք տեղափոխուած Անդրանիկը՝ Անդոն, իննյարկանի շէնքի վերջին յարկում բնակարան գնեց, առաջին գործն այն եղաւ, որ շէնքի կողապատն ի վեր զուգահեռ ձգուող բարդի տնկեց. հողի հետ կապուած յիշողութիւնը դեռ թարմ էր մէջը, բարդին տնկեց եւ նրա հետ նոր կեանքի հուն մտաւ: Եւ ջրեց ու խնամեց ծառը: Ու իրար հետ հասակ առան մարդն ու ծառը: Ինքը ջրում, խնամում էր, ուրիշները բարդու ստուերում նստում ու հենց բարդու զով ապահովութեան մէջ էլ բողոքում էին. «Էս ի՞նչ էր, բերին տնկեցին, պատուհանների դէմը բռնեց, առանց էն էլ տեսադաշտ չկար»:*

*«Գիւղացի Համբօ է, հողուջրի կարօտի մէջ տապակուած տղայ,- իբր կատակով պարզաբանում էին,- եկաւ ու պապի աւանդոյթն էլ հետը բերեց»: «Գիւղացի Համբօ է, թող իր համբոյութիւնն իր գեղումը անէր ու հողուջրի կարօտից էլ հալումաշ չլինէր,- քամահրում էին քաղաքում ծնուած ու քաղաքաբնակի մենաշնորհով օծուածները:- Քաղաք գալիս ու քաղաքն իրենց աչքուճաշակով են ուզում տեսնել, չեն հասկանում, որ ճարտարապետութիւն կայ, քաղաքի ձեւաւորման պլան ու նախագիծ կայ, ժամանակի պահանջներին համապատասխան էլիտար մտածողութիւն կայ, սրանք գիւղից փախչում գալիս, ոտքերը դեռ քաղաքի ասֆալտին մի կարգին չդրած՝ յանկարծ իրենց պապերի աւանդական նիստուկացն են յիշում: Քաղաքն ուզում են իրենց գիւղի պատկերով տեսնել»:*

*Թէպէտ քիչ, բայց հակառակ կարծիք յայտնողներ էլ կային, ասում էին. «Մազալու մարդիկ էք. ծառ ու կանաչ է, բնութեան կենդանի մի նախշ է՝ քաղաքի փոշոտ ճակատին, ի՞նչ վատ է, որ դժգոհում էք: Մտել ցեմենտբետոնի նեղուածքում շնչահեղձ էք լինում ու դեռ մի բան էլ հով ու զովի երանութիւնից բողոքում ենք: Ամրան տապին որ խշշում է, ոնց որ մանանայի շունչ է իջնում երկնքից ու մարդկանց հոգիները փառաւորում: Տակի հովին նստում, շնորհակալութեան ու օրհնանքի փոխարէն՝ տնկողի եօթ պորտն էք նախշում, տնաշէննե՛ր»: Իսկ Անդոն նորից բողոքի առաջ խուլ էր, ծառի կեղեւի տակ ներքաշուել ու ծառի հետ լոյսի խորհուրդն էր մթից զատում... Գիւղացի Համբոյի խօսքով՝ օրեր էին, մթնեցին, անցկացան, օրերը գումարուեցին իրար, ու գումարը դարձաւ քառասուն տարի...*

*Ու հիմա, քառասուն տարի անց, բարդին բոյ քաշել, հասել էր իններորդ յարկ ու ճաղատ կատարը ճօճում էր իր բնակարանի պատշգամբում նստած հալիւորի մտքերի հանգոյն:*

*Տարիների ընթացքում հարազատութեան մի քաղցր, մի անվերծանելի շղարշ էր հիւսուել նրանց արանքում, չասուած խօսքի պէս մի թաքուն գաղտնիք ու համր երգում էր հունցուել՝ ով առաջ գնաց, միւսին իր հետ տանում է: Այդ համր երգման մէջ մի քնքուշ գորովանք խմորուել, եւ նրանց միայնակ անտէրութիւնը դեռ մանրիկ ջերմութեամբ ցոլացնում էր:*

*Հալիւորը... քաղցկեղը կնոջն էր տարել, Ամերիկան՝ աղջիկներին, ժամանակի բորբոսն էլ բարեկամներին էր օտարացրել, ու խեղճ մարդը, օր ծերութեան, որբացել էր: Իսկ որբը որբի գլխին ի՞նչ տիրութիւն պիտի անի. ծառը դարձել էր որբի որբը, ու եթէ խօսքուզրոյցի արանքում կացնի սրութեան հարց առաջանար՝ առանց աչք թարթելու բնի վրայ փորձելու էին, որովհետեւ անտէրութեան բնոյթը ամենաթողութեամբ է անձնագրուած. եթէ դիմադրութիւն չկայ՝ կամքի դէմ չեն բռնանայ...*

*Այդ այդպէս էր ու այս վերջին տարում աւելի թանձրացաւ. հալիւորը մի ոտքը գետնին ու միւսով անկողին ընկաւ, օրերն անյուսութեան ոստայն կապեցին, ու ծառի ճաքած շուրթին այլեւս ջուր տուող չմնաց. ծառի բախտը կճեպ կապեց ու վերջնականապէս փակուեց իր մէջ: Ծառի շուաքում նստողը իր սուրճը խմեց, իր նարդին խաղաց, անցնող-դարձողի յետեւից լեզուն շաղ տուեց ու ծառի արմատին մի բուռ ջուր չլցրեց: Մարդը գերու թշուառ դրութեան մէջ անգամ մտնում ու շանսատակ անելուց առաջ իր գուլթուխղճի մէջ մի պահ արթնանում, մի բաժակ ջուր է տալիս նրա վառուող սրտին: Գերու համար չէ, պարզապէս մահուան լուրն իր մէջ կրողի ծանր խոհով՝ իր մարդ լինելու դրօշն է ծածանում դրախտ-դժոխք սահմանագլխում, մէկ էլ տեսար... ի՞նչ իմանաս: Իսկ սրանք՝ չէ, սրանց մտքի ու խղճի խմորը թէ ո՞նց էր հունցւում՝ անյայտ ու անըմբռնելի մնաց: Փակ ծրարում պահուող նամակի պէս, որ ո՛չ բացւում, ո՛չ էլ ընթերցւում է:*

*Հալիւորի սիրտը անճարութեան ցաւից կծկւում էր, տառապանքի սեւ երախի մէջ պատեպատ զարկւում ու օրուայ էն խաղաղ լռութեան մէջ մէկ էլ յանկարծ վերեւից պայթում էր. «Խիղճ ունեցէք, անաստուածնե՛ր, մի վեդրօ ջուր լցրէք ծառի քոքին, մեղք է, հոգի ունի, մի օր կը տապալուի ու կը տայ տակովը կ'անի ձեզ, այ անխիղճներ...»:*

*«Էս բայղուշն էլի կռռաց,- ամէն անգամ նրա ձայնից դիւոտւում ու քթների տակ փնթփնթում էին շէնքի բնակիչները,- էս ե՞րբ է մեռնելու՝ ականջներս դինջնա. կըռ հա կըռ, զզուացրեց»: Իրիկուայ հովին, երբ քամին երբեմն կոնքին տալով գալիս ու ծառի բունուսաղարթին էր բախւում, ծառն արմատից այնպիսի ահասարսուռ թուլութեամբ էր ճօճւում ու ճկւում, որ թւում էր՝ այլեւս չի դիմանայ եւ ուր որ է կը տապալուի: Այդ պահերին անկողնում մեկնուած հալիւորը տխրութեամբ մտածում էր. աշխարհը գեղեցիկ, դրախտի պատկերի մէջ հիւսուած սիրուն հեքիաթ է, երբ մարդու խիղճն ու հոգին իրար հետ համերաշխ ու արթուն են, անտարբեր, օտար թէ անտառի գազան՝ մեռնողի ծանր շնչի մէջ հաւասարապէս են գրոյական. չոր անապատից ջուր աղերսի ու նրանց անտարբեր գութը մի փորձի արթնացնել, անօգուտ ջանք է...*

*Պաղ սրտի բաբախման այդ անգութ վիճակն էր. շուրջբոլորը բարեւի չմեկնուած ձեռք ու խղճի ցամաք աւազան էր, օրերը թեւ թեւի քոչարի բռնած անցնելու էին, մինչեւ որ դիպուածի քմահաճոյքով...*

*Հալիւորն այլեւս ուժ չունէր. պատկան մարմիններին հեռախօսազանգի կապեց: Պատկան մարմիննե՜ր...*

*Նրանք թալանի համին ընկած, քարանձաւային ախորժակի վերյուշով բռնուած, քիաբաբխորովածի բոյրից այնպէ՜ս հիմնաւոր էին բթացել, որ հալիւորի միամիտ ահազանգ, պապակ ծառի տնքոց թէ փարաւոնների տարաշխարհիկ վարքուբարքի մասին մեռած-մոխրացած յուշ՝ նրանց համար ականջից դուրս ու քամու բերանն ընկած ամպի ծուէնի պէս աննկատ էր ծաւալուելու: «Հա»,- ասացին ու չեկան: «Դէ, հա, էլի»,- ասացին ու դարձեալ չեկան: «Ասինք՝ հա, էլի»,- նկատելի լարուածութեամբ դժգոհեցին, բայց դեռ բարակած նեարդի չափութրթիռի մէջ մնացին: «Դէ, զզուացրիր,- պոռթկացին ու սպառնալիքն էլ հետը ծեփեցին,- ուզում ես գանք ու քեզ իններորդ յարկից ցած գցե՞նք, այ բրածոյ արարած»: Եւ անջատուած հեռախօսազանգի տու-տուի վերջում նաեւ յաւելեցին. «Ծառը չորանում է: Չորանում է, չորանայ, ջհանդամը, թէ չի չորանայ: Մենք, ուրեմն, էլ բանուգործ չունենք, գանք քո ծառի հոգսը քաշենք: Մի շէնք ժողովուրդ էք, լեզուներդ աջուձախ շաղ տալու փոխարէն ծառը ջրէք»: Ու քթների տակ քրքջացին. «Բիձէն մոռացել է՝ էն աշխարհը գնայ, ծառի գալիք մահուան վրայ է սուգ կապել»: Էդ դեռ թեթեւ քամահրանք ու սպասուած հեգնանք էր. աշխարհի մեծ հակասականութեան տարուբեր չափը իրենց ախորժակների չափով կարգաւորող տղերքի սրտները առուփախի դողով էին բռնուած, ու ծառի պուճուր ցաւը եւ, առհասարակ, շուրջբոլորները թեւածող մանր ու խոշոր հոգսերը նրանց ուշադրութիւնը չէր շեղելու աւարի կախարդանքից:*

*Նրանց պատասխանը սպասուած էր ու թեթեւ, ծանրը ծառի հովի տակ, ծառի խուլ տնքոցը չլսողների անհոգի վերաբերմունքն էր: «Էս չեղաւ,- մի օր սրտնեղեց կէս-դհոլչի, կէս-կօշկակար ու վրան էլ դեռ մի կէս-թամադայի համբաւ ունեցող Սերոժը,- էս ծառը քանի դեռ չի չորացել ու դեռ ոտի վրայ է, կա՛մ պիտի ջրուի, կա՛մ կտրուի: Եկէք մի գլուխ գլխի հաւաք անենք, մի որոշում կայացնենք ու էս հարցը մէկընդմիշտ լուծենք»:*

*«Որոշո՜ւմ...,- հեգնեց Ռուսաստանի խուլ անյայտութիւնից վերջերս վերադարձած Արմէնը,- չես ասի՝ մի զօրեղ որոշում էլ Ազգային ժողովից բերենք: Էս ենք, էլի, բա ռուսը իր բակի ծառի հետ ըսենց կը վարուէ՞ր... Ամօթ է, տօ, ուրեմն սրտացաւ մէկը չկա՞յ, որ էս գործն իր վրայ վերցնի»: Անհասցէ այդ մէկի վզին հոգսի լուծ դնելու ցանկութիւնը բոլորի մտքում կար, պարզապէս այդ սրտացաւ մէկին գտնելն էր դժուար: «Երեւի թէ քեզ խնդրենք,- փորձեցին պարտաւորութեան տակ ներքաշել առաջին յարկի Արուսին,- առաջին յարկում ես ապրում, քեզ յարմար է, Արուս ջան: Շաբաթը մէկ մի վեդրօ էլ լցնես՝ բոլ է: Խերի մէջ կը լցուես»:*

*«Էդ որ առաջին յարկում եմ ապրում՝ կրակն եմ ընկե՞լ,- պայթեց Արուսը,- ծառը առաջին յարկից մինչեւ իններորդ յարկ՝ բոլորի ծառն է, ու բոլորն էլ պիտի ջրեն. հերթի դրէք. թող շաբաթը մէկը ջրի»: «Արո՛ւս, Արո՛ւս ջան, վերեւից իջնելն, ախր, դժուար կը լինի,- գլուխը հինգերորդ յարկի իր տան պատուհանից դուրս հանեց, առատ կրծքերը պատուհանագոգին դարսեց ու խօսքի խառնուեց անգլերէնի ուսուցչուհի Լուսինէն՝ ճերմակամաշկ Լուսիկը:- Մի դոյլ ջուր է, էլի, մի մեծ բան չի, տիկի՛ն Արուս»:*

*«Դու քո էդ տաքուկ բնում ծանրաքամակ ծուարի ու վերեւից հրամաններ տուր,- միանգամից գունատուեց ու լրբացաւ անառակութեան ետնախորշերից դեռ լրիւ չզօրացրուած մարդաթողը,- հրաման տալու փոխարէն խանութական ծագումդ մոռացի, էդ մի դոյլ ջուրը ձեռքդ վերցրու ու մէկ-մէկ բնից ցած իջի, որ քամակիդ ճարպերը մի քիչ մաշուեն: Խորհրդատուիս տես...»: Եւ շուռ եկաւ ու դուռը թիկունքում շխկացրեց: Լուսինէն ասած խօսքի համար փոշմանեց ու գլուխը ներս քաշեց պատուհանից: Իսկ Արուսը դեռ եռում էր, Արուսի խօսքը արձագանքուելու նման դեռ գնգում էր փակ դռների խորքից. «Արուսն էլ իրենց քոծն է, Արուսը ծառը ջրի, խնամի, որ իրենք ծառի հովին երանութեամբ փնչացնեն ու սրան-նրան բամբասեն: Կը ջրեմ, բա չեմ ջրի»: Երբ հալիւորի խնդրանք-վայնասունները աւելի յաճախակի դարձան, մի երկու ջահել իրար մէջ խորհուրդ արին ու մի երեկոյ կացնաւորուած իջան: Վերջ, համբերութիւնն էլ սահման ունի, ծառը պիտի կտրուի:*

*Ու վճիռ կայացրած գործի անցան: Ծառի շուրջը պտտուեցին, ծխեցին ու իրենց որոշման մէջ էլ մոլորուեցին. ծառն այնպէս հիմնաւոր էր խճճուած հոսանքալարերի, խաչուփաչ ձգուած լուացքի պարանների հիւսուածքում, որ առանց համապատասխան տեխնիկայի օժանդակութեան կացին քաշելն անհնար էր: Կացինները ծնկներին՝ նրանք մտազբաղ ծխեցին, ծառի հովին գարեջուր խմեցին ու վերջնականապէս մոլորուեցին: Յետոյ եկան խորհուրդ տուողները, գլխաւոր գործող անձանց շուրջը խմբուեցին, մտահոգութեան նոյն խոհով կնճռոտուեցին, հնարաւոր տարբերակները ծանրութեթեւ արին, իրենք էլ գարեջուր խմեցին եւ վերջում՝ «Տօ, դէ, ծառն էլ, ծառի տէրն էլ...»,- ու թքելով ցրուեցին: «Մի ծառ որ բոլորինը լինի, ոչ մէկինն էլ չի լինի ու անտէր կը լինի»,- պարանոցի կիսաոլորումով նրանց կողմը շրջուեց ու մենախօսութեան հանգով ձեւակերպեց շէնքի ծակ փիլիսոփան՝ Հեգելի արեւով երդուող թօշակառու Գերասիմը, ու տունդարձի կարճ ճանապարհի վրայ թզբեհը քաշելով, իր միտքը յաւելեց, քթի տակ ասաց.-«Մի ամբողջ շէնքով մի ծառ ջրելու հարց չեն կարողանում լուծել, բայց որ տեղը եկաւ՝ հինգ հազար տարուայ մշակութային ազգ լինելու փառքը դրօշակ կը սարքեն»:*

*Յետոյ ժամանակն իր խորքում մի բորբոսնած ու տենդոտ փառ*

*Շար.ը էջ 19*


Մանկավարժներն՝ են, որ գիտեն, թե ինչն է իրականում նպաստում ուսանողների ուսման գործընթացի բարելավմանը:
Հենց այդ նպատակով է, որ ուսուցիչները աշխատում են ծնողների հետ, որ նրանք կարողանան իրենց երեխաներին օգնել տանը:
Մեզ լավ հայտնի է, որ ստանդարտացված հարցաթերթիկների ուսուցանումը դա հարցի պատասխանը չէ, քանի որ ուսանողները արժանի են ստանալու բազմակողմանի կրթություն, որն իր մեջ կներառի արվեստ, երաժշտություն, կարիերա և տեխնիկական վերապատրաստում:
Դպրոցները պետք է բավականաչափ լավ ֆինանսավորում ստանան, որպեսզի հնարավոր լինի փոքրաքանակ դասարաններ ապահովել:
Իսկ քոլեջը պետք է մատչելի լինի բոլոր ուսանողների համար:
Այսպիսով, եթե հարցեր ունեք Կալիֆորնիայում Ձեր տեղամասային դպրոցի կամ
կրթության վերաբերյալ
ՀԱՐՑՐԵՔ ՈՒՍՈՒՑՉԻՆ
Որակյալ հանրային դպրոցները մեզ բոլորիս համար ավելի լավ Կալիֆորնիա կստեղծեն:
cta.org
Վճարված է Կալիֆորնիայի Ուսուցիչների միության կողմից
CTA CALIFORNIA TEACHERS ASSOCIATION

# Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովը Հռչակագիր է ընդունել

Շարունակուած էջ 7-էն

Մենք արձանագրում ենք, որ Հայաստանի Հանրապետութիւնում, Արցախում եւ Սփիւռքում համակողմանի աշխատանքներ են կատարւում Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաշեմին՝ ձեւաւորելով համայնապատկեր համահայկական շարժում «Յիշում եմ եւ պահանջում...» կարգախօսով:

ՀՀ Նախագահի գլխաւորած Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի պետական յանձնաժողովի եւ 50-ից աւելի տարածաշրջանային յանձնախմբերի ստեղծումը նոր որակ հաղորդեց Օսմանեան Թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում պետականօրէն մշակուած եւ իրագործուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների վերացմանն ուղղուած գործընթացներին:

Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում բոլոր պետութիւններին, հասարակական-քաղաքական գործիչներին, բարեգործներին, միսիոներներին, ովքեր ցեղասպանութիւնից յետոյ ապահով տանիք եւ խաղաղ պայմաններ ստեղծեցին հայութեան համար, ովքեր քաղաքական խիզախութիւն ունեցան՝ ասելու ճշմարտութիւնը հայ ժողովրդի ցեղասպանութեան մասին:

Առանձնակի շնորհակալ ենք նաեւ այն երկրներին ու միջազգային կազմակերպութիւններին, ովքեր ճանաչել եւ դատապարտել են Հայոց ցեղասպանութիւնը՝ որպէս մարդկութեան դէմ ուղղուած սոսկալի ոճրագործութիւն եւ պահանջում են Թուրքիայից ազատուելու այդ ծանր բեռից, առերեսուելու իր պատմութեանը եւ ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը:

Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով մարդու իրաւունքների մասին միջազգային իրաւունքի նորմերը եւ 1948 թուականին ՄԱԿ-ի կողմից ընդունուած «Ցեղասպանութիւն յանցագործութիւնը կանխարգելու եւ պատժելու մասին» կոնվենցիան՝ պայքարելու է իւրաքանչիւր հայի անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքների վերականգնման համար

Հաշուի առնելով, որ Հայոց ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ ուղղուած միջազգային յանցագործութիւն է, որի ճանաչումն ու դատապարտումը չունի վաղեմութեան ժամկէտ, եւ մեր պայքարն ուղղուած է ոչ միայն պատմական արդարութեան վերականգնմանը, մի ամբողջ հայրենազրկուած ժողովրդի իրաւունքների ճանաչմանը, այլեւ այն բանին, որ՝

ալեւս երբեք եւ ոչ մի տեղ չկրկնուի, եւ ոչ մի ժողովուրդ ցեղասպանութեան չենթարկուի,

Թուրքիան ճանաչի եւ զբաղուի հետեւանքների վերացման հարցերով՝ կրելով ոճրի ողջ պատասխանատուութիւնը,

ցանկացած հայ՝ ծպտեալ կամ բռնի կրօնափոխուած, կարողանայ իրեն հայ յայտարարել՝ վերջ դնելով հոգեկան տառապանքներին:

Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, դատապարտումը եւ հետեւանքների վերացումը այսուհետ եւս մնալու է մեր քաղաքական պայքարի օրակարգում, եւ համազգային դատի վերջնական լուծմանը հասնելու ենք հայութեան բոլոր հատուածների միասնական ջանքերով՝ յիշելով եւ պահանջելով:

1.6. Համախմբուիմ Հայ եկեղեցու շուրջ

Հայ եկեղեցին դարեր շարունակ եղել է եւ մնում է հայոց ոգու եւ ազգային ինքնութեան հիմնասիւներից մէկը, հաւատքը եւ համամարդկային արժէքները սերնդէ-սերունդ փոխանցողը, ազգանպաստ ու հայրենանուէր ձեռնարկների նախաձեռնողն ու իրագործողը:

Հայ եկեղեցին իր հոգեւոր եւ ազգային առաքելութեամբ դարերի ողջ ընթացքին անգնահատելի ներդրում է բերել նաեւ ազգապահպանութեան նուիրական գործին եւ անփոխարինելի դերակատարութիւն ունի մեր պետութեան եւ աշխարհում քրիստոնէութիւնը պետականօրէն առաջինը ընդունած մեր ազգի պատմութեան մէջ: Աշխարհասփիւռ դարձած հայ ժողովուրդը Հայ եկեղեցու շնորհիւ երբեք չկորցրեց իր կապն այն վեհ արժէքների հետ, որոնք կազմում են հայոց ինքնութիւնը:

Մենք կարեւորում ենք հայ եկեղեցու ամրապնդումն ու յետագայ զօրացումը՝ յանուն հայ ոգու եւ ազգային ինքնութեան յարատեւման, հայ եկեղեցու շուրջ ազգի համախմբուածութիւնը:

1.7. Արտակարգ իրավիճակներում յայտնուած հայերի անվտանգութիւնը

Աշխարհի տարբեր անկիւններում առկայ հակամարտութիւնները վտանգում են նաեւ հայ ժողովրդի զաւակներին եւ նոր մարտահրաւէր դառնում Հայաստանի Հանրապետութեան համար: Այսօր սիրիահայութիւնը ծանր օրեր է ապրում եւ պատերազմի հետեւանքով արիւնաքամ է լինում մեր մայր գաղութը, որի անդամների կէսից աւելին փախստական է դարձել, իսկ միւս կէսը պատերազմական իրավիճակում ամէն օր կորուստներ է կրում:

Հայաստանում այսօր հաստատուել է աւելի քան հազարաւոր սիրիահայ, եւ մենք գոհունակութեամբ արձանագրում ենք, որ պետութիւնը ջանացել է ստեղծել պայմաններ նրանց մատչելի կրթութեան, առողջապահութեան, զբաղուածութեան ապահովման, վերապատրաստման ուղղութեամբ:

Սփիւռքի գրեթէ բոլոր համայնքներն իրենց նիւթական եւ բարոյական օգնութեամբ կանգնեցին սիրիահայերի, այդ թւում՝ քեսապահայութեան կողքին:

Մենք վերահաստատում ենք, որ Հայոց պետութիւնն ու Սփիւռքը միասնաբար օգնութեան ձեռք պէտք է մեկնեն արտակարգ իրավիճակում յայտնուած իւրաքանչիւր հայորդու՝ օգնութեան ձեւաչափն ու կառուցակարգերը քննարկելով պետութեան եւ Հայ եկեղեցու հետ:

2. Հայաստանի Հանրապետութիւնում, Արցախում եւ Սփիւռքում գործող զանգուածային լրատուութեան միջոցները՝ որպէս համահայկական տեղեկատուական հսկայածավալ ցանց, ելնելով համազգային առաջնահերթութիւններից, այսուհետ եւս առաւել հետեւողական եւ ծրագրաւորուած աշխատանքներ պէտք է իրականացնեն Հայաստանի ձեռքբերումների, ղարաբաղեան հիմնախնդրի վերաբերեալ միջազգային հանրութեան իրազեկուածութեան աստիճանի բարձրացման ուղղութեամբ, յստակ քայլեր ձեռնարկեն թուրք-ատրպէյճանական կեղծարար, ապատեղեկատուական քարոզչամեքենայի դէմ եւ իրենց ուժերը համախմբեն նաեւ օտարալեզու զանգուածային լրատուամիջոցներում հայկական հիմնախնդիրներն արծարծելու, հայ դատի լուծմանը նպաստելու համար:

3. Սոյն ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ հիմք է ծառայում, որպէսզի ՀՀ կառավարութիւնը՝ ի դէմս ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ այլ պետական գերատեսչութիւնների, համահայկական կառոյցներն ու հայկական կազմակերպութիւնները, յանձնառու լինեն՝ համապատասխան ձեռնարկներով եւ ծրագրերով իրականացնելու յայտարարութեան գաղափարները եւ նախանշած խնդիրները:

Մենք ուժեղ ենք միասին եւ միասնաբար ենք կերտելու մեր պատմութիւնն ու ապագան՝ յանուն հզօր եւ ապահով ՀԱՅԱՍՏԱՆԻ, յանուն անկախ ու յաղթանակած ԱՐՑԱԽԻ եւ կազմակերպուած ՍՓԻՒՌՔԻ»:

# ՄԵԾ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ ՆԱԽԱՍԵՄԻՆ

Շարունակուած էջ 6-էն

րոզչութիւնը բոլորովին նոր եւ մեզի պարտադրուած երեւոյթ է: Հոս, ժամանակի չափազանց սղութեան պայմաններուն մէջ մենք շատ բան ընթացքին է, որ կը սորվինք ու կ'ընկալենք եւ շատ վրիպումներ ալ հասկնալի, որոշ չափով ալ ներելի են, բայց անշուշտ նոյնը չենք կրնար ըսել տեղեկատուութեան անվտանգութեա՛ն մասին:

Մենք, իսկ մեզի այդպէս սորվեցուցած է հազարամեակներու խորքերը հասնող մեր պատմութիւնը՝ վերահաս վտանգին հանդէպ շատ զգայուն ենք: Խօսքը անշուշտ վերահաս վտանգի՛ն, ոչ թէ թիկունքէն եկած նենգ ու դաւադիր հարուածին կը վերաբերի:

Այսօր, սակայն, տեղեկատուական պատերազմներուն ամէնէն թէժ շրջանին, մենք կարծես մոռցած ենք տեղեկատուական անվտանգութեան պարզագոյն կանոնները, եւ շատ յաճախ մամուլին մէջ հրապարակումներ կը սպրդին, որոնց տակ մեր թշնամին ամենայն սիրով կը ստորագրէր: Անշուշտ բազմաշերտ Սփիւռքն ալ ի'ր իւրայատկութիւնները ունի, սակայն, կրկնակի ցաւ է, երբ այսօրինակ հրապարակումները առաւելաբար հայրենակա՛ն մամուլին մէջ կը տեսնենք: Ինչե՜ր կան այդ հրապարակումներուն մէջ, պաշտպանութեան բանակին մէջ տիրող «բարքեր»-էն մինչեւ միջկուսակցական հայհոյախառն առճակատումներ, Խոջալուի ողբերգական դէպքերուն կամային, բացայայտ սուտ «լուսաբանումներ»-էն մինչեւ ոչ մէկ քննադատութեան դիմացող «քաղաքական» անտրամաբանական վերլուծումներ, որոնք, կը ներէք համեմատութեան համար, բայց առաւելաբար սուրճի գաւաթի գուշակութիւններ կը յիշեցնեն:

Մամուլի, խօսքի ազատութիւնն ու գրաքննութեան բացակայութիւնը պէտք չէ շփոթել ամենաթողութեան հետ, մանաւանդ, որ յիշեալ ամենաթողութենէն լիուլի կ'օգտուին մեր դարաւոր... չկամները:

Դ. Հայրենիք - Սփիւռք գործակցութեան զարգացման միտումները եւ հեռանկարները

Որքան ալ Հայրենիք-Սփիւռք զարգացման միտումները դրական ըլլան եւ համագործակցութեան հեռանկարները օր օրի յստականան, միեւնոյնն է՝ ակնկալութիւնները միշտ աւելին են, եւ ատիկա բնական է՝ երկփեղկուած ազգը միշտ մերձենալու, համաձուլուելու, բռնցքուելու արթուն երազանք ունի, որ քայլ առ քայլ պէտք է իրականութեան վերածէ նաե՛ւ այս համագործակցութիւնը: Այն փաստը, որ մենք՝ աշխարհասփիւռ հայութեան տեղեկատուութեան միջոցներու հարիւրաւոր ներկայացուցիչներս, այսօր հաւաքուած ենք քաղաքամայր Երեւանի այս հիւրընկալ դահլիճին մէջ՝ արգասաւոր համագործակցութեան լաւագոյն ապացոյցն է:

Մենք յաճախ կը գործածենք «Մայր Հայրենիք» նուիրական արտայայտութիւնը, եւ միշտ չէ, որ կ'անդրադառնանք, թէ այսօրինակ բառակապակցութիւն, ուր հայր եւ մայր հաւասար դերակատարում ունին՝ միայն հայերս ունինք:

Մենք աւելի քան վստահ ենք, որ Հայրենիք-Սփիւռք համագործակցութիւնը, երթալով աւելի՛ ծրագրային, հայեցակարգային ու գիտական հիմքերու վրայ կը դրուի: Ատիկա բոլորիս փափաքն է, եւ նախադրեալները կան, ստեղծուած են: Էական է, որ այս համագործակցութեան պետական կողմը՝ մեր հպարտ ու ազատ Հայաստան Աշխարհը, հաւասար ու անկողմնակալ վերաբերմունք դրսեւորէ աշխարհասփիւռ հայութեան բոլոր մեծ ու փոքր միաւորներուն նկատմամբ՝ անոնք ըլլան կուսակցական, յարանուանական, թէ ընկերային...

Այդ է ճշմարիտ միասնութեան մեծագոյն գրաւականը, իսկ այսպիսի միասնութիւնը այլեւս ոչ թէ փափաք, այլ հրամայակա՛ն է տարածաշրջանային ու քաղաքական մարտահրաւէրներուն հպարտօրէն ընդառաջ գացող մեր ժողովուրդին համար:

Յարգելի նախագահողներ, Տիկնայք եւ Պարոնայք, հիւրեր. այժմ Պէյրութի «Արարատ» օրաթերթի խմբագրակազմին եւ ընթերցողներուն կողմէ թոյլ տուէք շնորհակալութիւն յայտնել Լրագրողներու Համահայկական Եօթերորդ Համաժողովի նախագահութեան ու կազմակերպիչներուն՝ մասնակցութեան եւ այս պատասխանատու ամպիոնէն ելոյթի հնարաւորութեան համար...

Շնորհակալութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմ բոլորիս՝ մեր ստանձնած պարտականութիւններու կատարման եւ նպատակներու իրագործման ճամբուն վրայ...:



## ՄԱՀԱԶԴ



*ՅՈՎՍԷՓ ԱՍԱՏՐԵԱՆԻ*
*(Ծն. 1923, Իսկէնտէրուն)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր, եղբօր եւ ազգականին՝ ՅՈՎՍԷՓ ԱՍԱՏՐԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Շաբաթ, Սեպտեմբեր 20ին յետ երկարատեւ հիւանդութեան:*

*Յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Սեպտեմբեր 27ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հոլիվուտ Հիլզ Ֆորեսթ Լոն գերեզմանատան Սպիտակ Եկեղեցւոյ մէջ:*

*Սգակիրներ են՝*
*Զաւակը՝ Ալիկ Ասատրեան եւ դուստրը՝ Քաթրին,*
*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սամուէլ Ալաջաջեան եւ դուստրը՝ Ռիթա,*
*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ոսկեբերան եւ Կարինէ Ղազարեան եւ զաւակը՝ Գրիգոր,*
*Թոռները՝*
*Տէր եւ Տիկ. Տօքթ. Յակոբ եւ Դիանա Ալաջաջեան եւ զաւակները,*
*Տէր եւ Տիկ. Մասիս եւ Անի Պօղոսեան,*
*Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Լուսին Ասատրեան եւ զաւակը,*
*Եղբօր կինը՝ Տիկ. Սոնա Ասատրեան եւ զաւակները,*
*Քոյրը՝ Տիկ. Մարի Թերզեան եւ զաւակը,*
*Քոյրը՝ Տիկ. Արտեմիս Սանոսեան եւ զաւակը,*
*Եւ համայն Ասատրեան, Ալաջաջեան, Ղազարեան, Հեքիմեան, Նահապետեան, Եսայեան, Գէորգեան, Մխչեան, Արիստակեսեան, Զաղլասեան, Զափարեան, Քոչարեան, Ջամբազեան եւ Պօղոսեան ընտանիքներ եւ բարեկամներ:*

*Փոխան ծաղկեպսակի հաճեցէք ձեր նուիրատուութիւնները կատարել Հ.Մ.Մ.ի Միութեան 1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՅՈՎՍԷՓ ԱՍԱՏՐԵԱՆԻ մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի շրջանային վարչութիւնը խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:*

## Ընկ. Սեպուհ Գալփաքեանի Խօսքը

*Շարունակուած էջ 5-էն*

*ըը այնպէս տնօրինեց, որ մենք հիմա մեր պատգամաւորական գործունէութիւնը ուրիշ երկիրներու մէջ կը ծաւալենք, սակայն ատիկա՝ հաւատացէք, կը կրկնապատկէ մեր պատասխանատուութիւնը Հայրենիքի հանդէպ, եւ այստեղ՝ այս դահլիճին մէջ ներկայ տասնեակ երկիրներու պատգամաւորներ, որոնց կողմէ ես ողջոյնի այս խօսքը կը յղեմ՝ ըստ իս՝ այս հարցին մէջ միակարծիք են: Սփիւռքի մէջ չկայ հայ պատգամաւոր, նախարար կամ պաշտօնեայ, որ իր ամբողջ ներուժը չներդնէ յանուն Հայաստանի բարգաւաճման:*

*Բացառութիւններ, միշտ ալ կրնան ըլլալ, սակայն ինչպէս կ'ըսեն, բացառութիւնները ճշմարտութիւնը հաստատելու համար են:*

*Բարի եւ արգասաբեր աշխատանք մաղթենք մեր համաժողովին: Թող այս աշխատանքները այնպիսի հունով ընթանան, որ մեր եռանդն ու նպատակասլացութիւնը կրկնապատկուի եւ եռապատկուի...:*


OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506


## ՀԱԼԻՒՈՐԻ ԾԱՌԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*կապեց, ու աւազի ժամացոյցի պէս հալիւորն սկսեց ինքն իր ներսից հոսել-դատարկուել. մի ոտքով էր անկողնում՝ երկու ոտքով ընկաւ: Որոշ ժամանակ անց հալիւորի յորդորները լռեցին: Ծառի վախճանի պատկերում՝ նա հիմա ինքն էր իր մէջ տապալուած ծառ, ժամանակի սղոցի բերանն ընկած՝ դանդաղ ու մանրամասն թեփ էր դառնում: «Էս կարող ա՞ ոտները տնկեց,- իրենց տեսակին շատ բնորոշ կատակի մէջ ջրիկացան բակի ջահելները,- ձէնը չի լսւում, վայ թէ դրախտի ուղեգիրն ստացել է արդէն»:*

*«Դրախտ թէ դժոխք՝ էդ էր, հալիւորի ձայնը մարել ու չէր լսւում: Բայց նա դեռ կար. ինքը ծառի յիշողութեան մէջ ու ծառն իր յիշողութեան մէջ դեռ կային, լուռ մարմրում էին: Այդպէս դէմք ու դիմակ դարձած իրար էին նայում: Մարդն ու ծառը: Եւ համր ու լուռ զրուցում էին: Աշխարհի հետ հալիւորի միակ կապը ութերորդ յարկի Քնարն էր, իր խղճի մէջ արթուն մի կին, որ հարազատի պէս,- իր նուազ խնամողութեան մէջ, անհրաժեշտ դեղեր էր ճարում-բերում, հացուջուր տալիս, մինչեւ հալիւորի համար ծրարուող այն գիշերը... Այդ գիշեր պատուհանի դէմ-դիմաց կանգնած բարդու ճիւղին մի գոյնզգոյն ծիտ էր նստել ու երգում էր, ինչ անուշ էր երգում: Ամբողջ գիշեր մի ձէնի երգեց, եւ լուսադէմին հալիւորը հանգաւ: Լուռ, ինքն իր մէջ, առանց ցաւ ու տնքոցի մտածում էր, ու մտքի կիսատ ծիրում էլ հոգին աւանդեց...*

*Քնարի կանչով հարեւաններն իբր ոտքի ելան: Մեռնի անտէրութեան չոր գլուխը. աղջիկներն այդպէս էլ իրենց մասին լուր չտուին՝ քաղաքակրթութեան պղտոր ջրերում հալուել ու անհետք կորել էին, քոյր չունէր, եղբայրը շուտ էր մահացել, գիւղի հեռու բարեկամներն էլ երեւի թէ իրենք իրենց հոգսի մէջ էին անթաղ մեռել... Դէ որ արանքում հարազատ չկար՝ շտապօգնութիւն զանգեցին:*

*Անատոմիկի ճերմակ խալաթաւորները եկան, հալիւորի դին չորի մէջ փաթաթեցին, դրեցին շտապ օգնութեան մեքենան ու տարան: Շէնքի բնակիչները պատուհան-պատշգամբներից կախուած նայում էին: Ասես մի տեսակ ծամօն ծամելու անտարբերութեան մէջ լինէին: Տխուր, անհամ մի լռութիւն էր հիւսում: Անսպասելի ու մէկէն քամի խաղաց, իր թափի մէջ գնալով ուժեղացաւ, բակի կեղտն ու փոշին խոլապարի մէջ առաւ ու տարաւ պատուհան-պատշգամբներից նայողների սառած դէմքներին ծեփեց: Նրանք գլուխները նոր էին ներս քաշել, երբ անասելի դղրդիւնով ինչ-որ բան փլուեց ու նրանց նորից դէպի թամաշայի տեսարան տարաւ: Եւ ապշանքը մտաւ դիպուածի սեւ փայլի մէջ ու շրջանակուեց. ծառը տապալուել էր: Տապալուել եւ իր ամբողջ երկարութեամբ, ասես ինչ-որ կախարդական հրահանգով, ճիշտ ու մանրամասն ընկել էր բակում կանգնած արտասահմանեան շքեղ մեքենաների շարասեան վրայ: Տապալուել ու, հոգեվարքի դողէրոցքով բռնուած, մեքենաների վրայ թպրտում էր: Թպրտաց, սաղարթների շփշփոցով ջղաձգուեց, ցնցուեց ու վերջնականապէս հանգաւ քնած ու արթուն ականջների մէջ:*

**SAVE THE DATE**

AMAA-Haigazian University Celebratory Banquet in honor of Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq.; Saturday, November 15, 2014, 6 pm, Beverly Hills Hotel, $200; Information: Julie Aharonian 818-368-5266; Katia Kermoyan 818-242-5064.

**SAVE THE DATE**

DECEMBER 6 - Saturday: Western Diocese Eleventh Annual Christmas Ball; 7:00 p.m. Reception and Gala Tree Lighting Ceremony, 8:00 p.m. Dinner-Dance and Program honoring Ten Young Professiional Community Activists, Nazareth and Sima Kalaydjian Hall, 3325 North Glenoaks Blvd., Burbank. For further info call the Western Diocese (818) 558-7474.

**Գրաւուած օր**
**Նոյեմբեր 15, 2014**
**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**
**60 Ամեակի Շքեղ հանդիսութիւն**


ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

# Հայաստանի Անկախութեան 23-րդ Տարեդարձի Նուիրուած Փառատօնը





















